Պատմվածք, Արձակ, Ֆրանսիական գրականություն

16+

Թարգմանիչ՝ Տ. Կարա-Սարգսյան

ՕՆՈՐԵ ԴԸ ԲԱԼԶԱԿ

ԿԱՐՄԻՐ ՊԱՆԴՈԿԸ

Մարկիզ դը Կյուստինին

Չեմ հիշում ո՞ր տարին, Փարիզի մի բանկիր, որը առևտրական շատ ընդարձակ կապեր ուներ Գերմանիայում, ընդունելություն էր կազմակերպել իր բարեկամներից մեկի համար, որն այն մարդկանցից էր, որոնց հետ երկար ժամանակ անծանոթ են լինում, բայց վաճառականներն ամենուրեք գործարար նամակագրություն ունեն նրանց հետ: Այդ բարեկամը, Նյուրնբերգի բավականին անվանի մի ֆիրմայի գլխավոր, բարեհոգի, հաստ մի գերմանացի էր, ճաշակի, էրուդիցիայի տեր մարդ, ծխամորճի սիրահար մարդ նամանավանդ, նյուրնբերգցու լայն ու գեղեցիկ դեմքով, քառակուսի խիստ լայն ճակատով և բավականին ցանցառ շեկ մազերով: Նա ներկայացնում էր Գերմանիայի հարազատ զավակների տիպարը, այն մաքուր ու ազնիվ Գերմանիայի, որն այնքան հարուստ է հարգալիր բնավորությամբ մարդկանցով, և որի խաղաղասիրական բարքերը երբեք չեն փոխվում նույնիսկ յոթ ներխուժումներից հետո: Օտարականը ծիծաղում էր պարզամտորեն, լսում էր ուշադրությամբ, և հիանալի խմում, ըստ երևույթին Շամպայնի գինին դուր էր գալիս նրան այնքան, որքան Յոհանեսբուրգի դեղնագույն գինիները: Նրա անունն էր Հերման, ինչպես համարյա այն բոլոր գերմանացիները, որոնք հանդես են բերվել հեղինակների կողմից: Որպես մի մարդ, որը չգիտե որևէ բան թեթևորեն կատարել, նա հաստատ նստած էր բանկիրի սեղանին, ուտում էր գերմանական ախորժակով, որը հանրածանոթ է Եվրոպայում, և բարեխղճորեն հրաժեշտ էր տալիս մեծն Կարեմի[1] խոհանոցին: Իր հյուրին պատվելու համար տանտերը հրավիրել էր մի քանի մտերիմ բարեկամների՝ կապիտալիստների, առևտրականների և մի քանի նազելաշուք և գեղանի կանանց, որոնց քաղցրախոսություններն ու անկեղծ ձևերը դաշն էին գերմանական սրտակցության հետ: Իսկապես, եթե դուք (ինչպես ինքս եմ ունեցել այդ հաճույքը) տեսնեիք այդ ուրախ մարդկանց հավաքույթը, մարդիկ, որոնք ներս էին քաշել իրենց առևտրական ճիրանները՝ անձնատուր լինելով կյանքի հաճույքներին, ապա, դժվար թե ատեիք վաշխառուական զեղչումները կամ անիծեիք սնանկությունները: Մարդ չի կարող միշտ վատ բան անել: Դրա համար էլ, նույնիսկ ծովահենների ընկերակցության մեջ, կլինեն հաճելի ժամեր, որոնց ընթացքում նրանց չարագուշակ նավում դուք ձեզ պիտի զգայիք կարծես ճոճաթոռի վրա:

— Նախքան մեզնից հեռանալը, հուսով եմ, պարոն Հերմանը մեզ կպատմի գերմանական ոգով մի սարսափելի պատմություն:

Այս խոսքերն ասաց աղանդերի պահին մի երիտասարդ, խարտյաշ ու գունատ անձնավորություն, որը, անտարակույս, կարդացել էր Հոֆմանի հեքիաթներն ու Վալտեր Սկոտի վեպերը: Դա բանկիրի մեկ հատիկ աղջիկն էր, մի գեղազմայլ էակ, որի դաստիարակությունն ավարտվում էր Ժիմնազ թատրոնում, և որ խենթության աստիճանի սիրում էր այնտեղ բեմադրված պիեսները: Այդ րոպեին հյուրերը գտնվում էին մեղկության այն լուռ ու երջանիկ տրամադրության մեջ, որ մենք ունենում ենք մի համադամ ճաշից հետո, երբ փոքր-ինչ չափից դուրս ենք վստահել մեր մարսողական կարողությանը: Մեջքը աթոռի հենակին, դաստակը թեթևորեն դրած սեղանի եզրին՝ յուրաքանչյուր հյուրը ծուլորեն խաղում էր իր դանակի ոսկեզօծ շեղբի հետ: Երբ ճաշկերույթը հասնում է այդ

վերջին փուլին, որոշ մարդիկ տրորում են տանձի մի կուտ, ուրիշները իրենց բթամատի և ցուցամատի արանքում, հացի միջուկից գնդիկ են սարքում, սիրահարները գծագրում են անձև տառեր մրգի մնացուկներով, ագահները հաշվում են իրենց կորիզները և դրանք շարում իրենց պնակում, ինչպես դրամատուրգը բեմի խորքում դասավորում է իր արտիստներին: Սրանք որկրամոլական երանություններ են, որ Բրիյա-Սավարենը[2], թեպետ անթերի հեղինակ, հաշվի չի առել իր գրքում: Սպասավորները հեռացել էին: Աղանդերը նմանվում էր ինչ-որ էսկադրայի՝ մարտից հետո, ամբողջովին ջարդոտված, թալանի տրված, անշքացած: Ափսեները թափառում էին սեղանի վրա հակառակ այն համառության, որով տանտիրուհին ճգնում էր դրանք տեղավորել տալ իրենց տեղերը: Մի քանի անձնավորություններ դիտում էին շվեյցարական տեսարաններ՝ համաչափորեն կախված սեղանատան գորշ պատերին: Հյուրերից և ոչ մեկը չէր ձանձրանում: Մեզ դեռ չի հանդիպել այնպիսի մեկը, որը տխրած լինի մի լավ ճաշի մարսողության ժամանակ: Այդ պահին, մենք սիրում ենք մնալ ինչ-որ անդորրի մեջ՝ խորհողի երազանքի և որոճացող կենդանիների բավականության միջև գտնվող մի տեսակ վիճակ, որը պետք էր անվանել գաստրոնոմիական նյութականացած մելամաղձոտություն: Ուստի, հյուրերն ինքնաբերաբար շուռ եկան դեպի բարեհոգի գերմանացին՝ ինչ-որ բալլադ լսելու մտքով ոգևորված, թեկուզ և դա շահեկանությունից զուրկ լիներ: Այդ օրհնյալ դադարի ընթացքում, պատմողի ձայնը միշտ էլ ախորժալուր է թվում մեր ընդարմացած զգայարաններին և նպաստում է, այսպես կոչված, ժխտական երջանկության զգացումին: Լինելով պատկերներ որոնող, ես զմայլվում էի ժպիտով զվարթացած, մոմերով լուսավորված այդ դեմքերով, որոնց վրա կերուխումը փռել էր իր ծիրանին: Դրանց տարբեր արտահայտությունները հետաքրքիր էֆեկտներ էին առաջ բերում ջահերի, ճենապակյա կողովների, մրգերի և բյուրեղապակիների միջով:

Հանկարծ իմ երևակայությունը գրավվեց հենց իմ դեմ առ դեմ նստած հյուրերից մեկի տեսքով: Գեր, ծիծաղասեր մի մարդ, որը բորսային միջնորդի կերպարանքն ու ձևերն ուներ և շատ սովորական մտքի տեր մեկն էր երևում: Ես նրան դեռևս չէի նկատել: Այդ րոպեին, անտարակույս, ինչ-որ աղոտ լույս մթագնելով նրա դեմքը, ինձ թվաց, թե սա այլափոխվել, հողի գույն էր ստացել. մանուշակագույն երանգներն ակոսում էին այդ դեմքը, կարծես, դա լիներ մահամերձի դիակնային դեմքը: Անշարժ, ինչպես այն ֆիգուրները, որոնք կարված են լինում դիորամաներում, նրա ապուշ հայացքը սևեռված էր մի բյուրեղապակյա խցանի պսպղուն երեսակների վրա, սակայն նա, իհարկե, դրանք չէր հաշվում, և թվում էր, թե նա խորասուզված է ապագայի կամ անցյալի ինչ-որ ֆանտաստիկական հայեցողության մեջ: Երկարորեն զննելուց հետո այդ կասկածելի դեմքը՝ ես մտածեցի «Արդյոք հիվա՞նդ է, թե շա՞տ է խմել: Մնանկացել է բորսային ֆոնդերի արժեզրկմա՞մբ, թե մտածում է խաբել իր պարտատերերին»:

— Տեսե՛ք,— ասացի իմ հարևանուհուն, նրան ցույց տալով անծանոթի դեմքը,— մի՞թե դա չի նշանակում մոտալուտ սնանկություն:

— Օ՜հ,— պատասխանեց հարևանուհիս,— այն ժամանակ նա ավելի զվարթ կլիներ,— ապա թափահարելով գլուխը, նա ավելացրեց.— եթե այսպիսի մարդ երբևիցե սնանկանա, այդ մասին պետք էր թմբկահարել աշխարհով մեկ... Նա մեկ միլիոն արժողությամբ միայն անշարժ կալվածներ ունի: Նա կայսերական զորքերի նախկին մատակարար է՝ մի բավականին յուրօրինակ մարդ: Նրա կրկին ամուսնությունը պարզապես սպեկուլյացիա էր, այնուամենայնիվ նա մեծապես երջանկացնում է իր կնոջը: Ունի մի սիրուն աղջիկ, որին նա երկար ժամանակ հրաժարվեց ճանաչելուց, սակայն որդու դժբախտ մահը, որը սպանվեց մենամարտում, նրան ստիպեց աղջկանը վերցնել իր մոտ, որովհետև նա այլևս չէր կարող երեխա ունենալ: Այսպիսով խեղճ աղջիկը միանգամից դարձավ Փարիզի ամենահարուստ ժառանգորդուհիներից մեկը: Միակ որդու

կորուստն այս պատվական մարդուն համակեց մի այնպիսի վշտով, որը երբեմն նա չի կարողանում թաքցնել:

Այդ րոպեին, մատակարարն իր աչքերը բարձրացրեց ինձ վրա, նրա հայացքն ինձ սարսռեցրեց. այնքան մռայլ էր ու մտախոհ: Այդ ակնարկը անտարակույս, մի ամբողջ կյանք էր ամփոփում: Բայց նրա դեմքը հանկարծ զվարթացավ. նա վերցրեց բյուրեղապակյա խցանը, այն մեքենաբար դրեց ջրով լի մի շշի վրա, որը գտնվում էր նրա պնակի առջև, և ժպտալով, շուռ տվեց գլուխը դեպի պարոն Հերմանը: Իր որկրամոլական վայելքներով երանացած այդ մարդը, անկասկած, գլխում ոչ մի միտք չուներ և ոչ մի բանի մասին չէր մտածում: Ուստի, ես մի տեսակ ամոթ զգացի՝ գուշակի իմ գիտությունն իզուր վատնելով փորձի համար ոչ պիտանի անասնակերպ, թանձրամիտ այդ ֆինանսիստի վրա: Մինչ ես, այսպես ապարդյուն կերպով, գանգաբանական դիտումներ էի անում, բարեհոգի գերմանացին մի լավ քթախոտ էր քաշել և սկսում էր իր պատմությունը: Ինձ համար դժվար կլիներ վերարտադրել այդ պատմությունը նույն արտահայտություններով, նրա հաճախակի դադարներով ու ավելորդաբանություններով: Ուստի, ես այն գրեցի իմ ձևով՝ բացառելով նյուրնբերգցու մեղանչումները և թողնելով միայն այն, ինչ կարող է հետաքրքրական ու բանաստեղծական համարվել, և այդ կատարելով այն գրողների պարզասրտությամբ, որոնք մոռանում են իրենց գրքերի վերնագրի ներքևում դնել. «թարգմանված գերմաներենից»:

ՄՏԱԾՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

— Վանդեմյեր ամսի վերջերին, ռեսպուբլիկական ժամանակաշրջանի VII տարում, որը սովորական տոմարով համապատասխանում է 1799 թվականի հոկտեմբերի 20-ին, երկու երիտասարդներ, առավոտյան մեկնելով Բոննից, իրիկնամուտին հասել էին Անդերնախի մոտերքը՝ Հռենոսի ձախ ափին, Կոբլենցից մի քանի մղոն հեռավորության վրա գտնվող մի փոքրիկ քաղաք: Այդ ժամանակ գեներալ Օժերոյի հրամանատարության տակ գտնվող ֆրանսիական բանակը մաններում էր գետի աջ ափին հաստատված ավստրիացիների աչքերի առջև: Ռեսպուբլիկական դիվիզիայի գլխավոր կայանը գտնվում էր Կոբլենցում, և Օժերոյի բանակի մաս կազմող կիսաբրիգադներից մեկը տեղավորված էր Անդերնախում: Երկու ճանապարհորդները ֆրանսիացիներ էին: Դատելով դրանց թավշյա, կարմիր զարդարանքներից, սպիտակախառն, կապույտ համազգեստից, նրանց թրերից, մանավանդ կանաչ մոմլաթով պատած և եռագույն փետրազարդով պաճուճված գլխարկից, մինչև իսկ գերմանացի գյուղացիները պիտի ճանաչեին զինվորական վիրաբույժներին՝ գիտության և արժանիքի տեր այդ մարդկանց, որոնցից շատերը սիրված են ոչ միայն բանակում, այլև մեր զորքի կողմից գրավված երկրներում: Այդ ժամանակաշրջանում, ընտանիքի շատ ու շատ զավակներ, կտրվելով իրենց բժշկական ստաժավորումից՝ գեներալ Ժուրդանի գործը հանդիսացող զորակոչի վերջին օրենքով, բնականորեն գերադասել էին շարունակել իրենց ուսումը ռազմադաշտի վրա, քան թե ենթարկվել զինվորական ծառայության, որը քիչ էր ներդաշնակվում նրանց սկզբնական դաստիարակության և խաղաղ կոչման հետ: Գիտության նվիրված մարդիկ, խաղաղասեր ու հաճոյակատար այդ երիտասարդները որոշ բարիք էին կատարում անսահման դժբախտությունների միջում և բարեկամական կապեր էին հաստատում գիտնականների հետ այն տարբեր երկրների, որտեղով անցնում էր Ֆրանսիական ռեսպուբլիկայի դաժան քաղաքակրթությունը: Երկուսն էլ ունեին ուղեգրեր և բուժակի պաշտոնի հրաման, ստորագրված Կոստի և Բերնադոտի կողմից և գնում էին դեպի այն կիսաբրիգադը, որին կցված էին: Նրանք երկուսով պատկանում էին բովեցի ոչ շատ հարուստ բուրժուական ընտանիքների, բայց ուր խաղաղասիրական բարքերն ու պրովինցիալ նվիրվածությունը փոխանցվում էին որպես ժառանգության մի մասը: Հասնելով ռազմի

թատերաբեմի վրա աշխատանք սկսելու համար նշանակված ժամանակից շուտ, հետաքրքրասիրությամբ, որը բնական է երիտասարդների մոտ, մինչև Ստրասբուրգ նրանք ճանապարհորդել էին ուղեկառքով: Մայրական զգուշավորությունը թեպետև թույլ չէր տվել նրանց հետները վերցնել ոչ մեծ գումար, այնուամենայնիվ, նրանք իրենց հարուստ էին համարում, ունենալով մի քանի ոսկի, իսկական գանձ մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ Ռեսպուբլիկայի թղթադրամները հասել էին իրենց արժեզրկման ծայր աստիճանին, և ուր ոսկին շատ թանկ էր արծաթից: Երկու բուժակները քսան տարեկանից ավելի չէին և երիտասարդական ոգևորությամբ հնազանդվեցին իրենց դրությանը: Ստրասբուրգից մինչև Բոնն հասնելիս, նրանք այցելել էին կուրֆյուստի պալատը, և որպես արվեստագետ, որպես փիլիսոփա, որպես դիտող հիացել էին Հռենոսի ափերով: Երբ մարդը գիտական ասպարեզ է ընտրում, այդ տարիքում չափազանց բազմակողմանի է լինում: Նույնիսկ սիրային արկածներում և ճանապարհորդելիս բուժակը պետք է դիտողություններ կուտակի, որոնք նրա հետագա հաջողության և փառքի գրավականն են: Երիտասարդներն անձնատուր էին եղել, ուրեմն, այն խորունկ հիացմունքին, որով համակվում են կրթված մարդիկ Մայնց և Քյոլնի միջև Հռենոսի ափերի ու շվաբյան պեյզաժների պարզած տեսարանի առջև: Բնությունն այստեղ խիստ հարուստ է, բլրակների վրա սփռված են միջնադարի շատ հուշարձաններ, և ամենուրեք ամեն ինչ հրի ու սրի դրոշմ է կրում: Լուդովիկոս XIV-ը և Տյուրենը կիզել էին այդ զմայլելի շրջանը: Այս ու այնտեղ, ավերակները վկայում են այն հպարտության կամ գուցե հեռատեսության մասին, որով Վերսալի թագավորը քանդել տվեց անցյալում Գերմանիայի այդ մասը զարդարող հիասքանչ դղյակները: Տեսնելով այդ հրաշալի երկիրը, ծածկված անտառներով, միջին դարերի նկարագեղ կոթողներով լի, բայց ավերակ վիճակում, դուք ըմբռնում եք գերմանական հանճարը, այդ ժողովրդի երազուն ու միստիկական ոգին: Սակայն, Բոննում, երկու բարեկամների անցկացրած ժամանակը հետապնդում էր միաժամանակ թե՛ գիտական և թե հաճույքի նպատակ: Հենց կուրֆյուրստի պալատում էր տեղավորված ֆրանս-հոլանդական բանակի և Օժերոյի դիվիզիայի գլխավոր զինվորական հիվանդանոցը: Նորակոչիկ բուժակները, ուրեմն, գնացել էին այնտեղ, տեսնելու բարեկամներին, հանձնարարական նամակներ հանձնելու իրենց պետերին և ընտելանալու իրենց արհեստի առաջին տպավորությունների հետ: Բայց և այնպես, այնտեղ, ինչպես այլուր, նրանք թոթափեցին մի քանիսն այն նախապաշարմունքների, որոնց մենք երկար ժամանակ հավատարիմ ենք մնում ի նպաստ մեր հայրենական երկրի հուշարձաններին և գեղեցկություններին: Նրանք հիանում էին կուրֆյուրստի պալատը զարդարող սյուներով և շարժվելով առաջ՝ երկուսն էլ զարմանում էին գերմանական ճարտարապետության հոյակապությամբ, ամեն քայլափոխին հանդիպելով հինավուրց կամ ժամանակակից արվեստի գանձերին: Երբեմն ճանապարհը, որով գնում էին երկու բարեկամները, մոտենալով Անդերնախին, նրանց հասցնում էր մյուսներից ավելի բարձր գրանիտյա ժայռի գագաթին: Այնտեղ, անտառի մի բացատի միջով կամ ժայռերի արանքով նրանք նշմարում էին Հռենոսի մի որևէ տեսարան՝ ավազով կամ փարթամ բուսականությամբ շրջանակված: Կիրճերը, արահետները, ծառերը տարածում էին աշնանային բույրը, որը հարկադրում է անրջել: Անտառների կատարները սկսել էին ոսկեզօծվել, ջերմ ու թուխ գույներ ստանալ — ծերության նշաններ — տերևները թափվում էին, բայց երկինքը դեռևս պահում էր իր գեղափայլ լազուրը, և ճանապարհները, չոր, դեղին ժապավենների նման գծագրվում էին պեյզաժում, որը այդ պահին լուսավորված էր մայր մտնող արեգակի շեղ ճառագայթներով: Անդերնախից կես մղոն հեռավորության վրա երկու բարեկամները քայլեցին խորունկ լռության մեջ, կարծես, պատերազմը չէր ավերում այդ գեղեցիկ երկիրը, և քայլեցին մի արահետով, որ այծերը բաց էին արել կապտավուն գրանիտի բարձր պարիսպների արանքում, որոնց միջով մռնչալով անցնում էր Հռենոսը: Շուտով նրանք ցած իջան կիրճի լանջով, որի խորքում գտնվում է փոքրիկ քաղաքը, պչրանքով փռված գետի ափին, ուր նավերի համար հարմար մի նավահանգիստ է ներկայացնում:

— Գերմանիան իրոք որ շատ գեղեցիկ երկիր է,— բացականչեց երկու երիտասարդներից մեկը, որի անունն էր Պրոսպեր Մանյան, այն րոպեին, երբ նա նկատեց Անդերնախի խայտաբղետ տները՝ իրար մոտ շարված, ինչպես ձվերը զամբյուղում, ծառերով, պուրակներով և ծաղկանոցներով իրարից անջատված: Ապա, նա մի րոպե հիացավ հեծանները դուրս ցցված կտուրներով, փայտակերտ սանդուղքներով, հազար ու մի խաղաղ բնակարաններով լի նրբանցքներով, նավահանգստում ջրի վրա օրորվող նավակներով:

Հենց որ պարոն Հերմանը արտասանեց Պրոսպեր Մանյանի անունը, մատակարարը վերցրեց ջրամանը, ջուրը լցրեց իր բաժակում և այն դատարկեց մի ումպով: Ես նկատեցի նրա այդ արագ շարժումը, ինձ թվաց, թե նրա ձեռքերը թեթևորեն դողում են, և կապիտալիստի ճակատը քրտնած է:

— Ինչպե՞ս է կոչվում նախկին մատակարարը,— հարցրեցի ես սիրալիր հարևանուհուս:

— Տայֆեր,— պատասխանեց նա:

— Դուք ձեզ վա՞տ եք զգում,— միջամտեցի ես, այդ յուրօրինակ անձնավորության գունատվելը տեսնելով:

— Ամենևին,— ասաց նա, ինձ շնորհակալություն հայտնելով քաղաքավարական մի շարժումով:— Լսում եմ,— ավելացրեց նա, գլխով նշան անելով հյուրերին, որոնք նրան նայեցին միասնաբար:

— Ես մոռացել եմ մյուս երիտասարդի անունը,— ասաց պարոն Հերմանը:— Միայն թե, Պրոսպեր Մանյանի ինձ հաղորդած գաղտնիքներից իմացա, որ նրա ընկերը թուխ էր, բավականին նիհար և զվարթախոս: Եթե թույլ տաք, ես նրան կանվանեմ Վիլհելմ՝ հստակություն տալու համար այս պատմությանը:

Այսպես ուրեմն, տեղական կոլորիտի և ռոմանտիզմի հանդեպ առանց հարգանք ունենալու, ֆրանսիացի բուժակին գերմանական անունով մկրտելուց հետո՝ բարեհոգի գերմանացին վերսկսեց իր պատմությունը:

— Այն պահին, երբ երկու երիտասարդները հասան Անդերնախ, ուրեմն մութ գիշեր էր: Մտածելով, թե շատ ժամանակ պետք է կորցնեին, փնտրելով իրենց պետերին, նրանց հանձնելու իրենց փաստաթղթերը, զինվորական մի օթևան ստանալու զինվորներով լեցուն այդ քաղաքում, նրանք որոշեցին իրենց վերջին ազատ գիշերն անցկացնել մի պանդոկում, որը գտնվում էր Անդերնախից հարյուր քայլ հեռավորության վրա, և որի՝ մայրամուտի շողերով գեղեցկացած հարուստ գույները ժայռերի բարձունքից հիացրել էին նրանց: Ամբողջությամբ կարմիր ներկված այդ պանդոկը շատ հաճելի տեսք ուներ, զատորոշվելով քաղաքի ընդհանուր զանգվածից և զանազան ծառերի կանաչ սաղարթներից իր վառ գույնով հակադրվելով ջրի գորշավուն գույներին: Այդ պանդոկի անունը ծագել էր նրա պատերի գույնից, մի գույն, որ անհիշատակ ժամանակներից ի վեր ընտրել էր հիմնադրի քմայքը: Բավականին բնական նախապաշարումներից և առևտրական նկատառումներից ելնելով, իրար հաջորդող սեփականատերերը խնամքով պահպանել էին այդ օթևանի արտաքին տեսքը, մի օթևան, որ քաջ հայտնի էր Հռենոսի նավարարներին: Լսելով ձիերի աղմուկը՝ «Կարմիր պանդոկ»-ի տերը երևաց դռան շեմքին:

— Աստված վկա, պարոնայք,— բացականչեց նա,— մի փոքր էլ ուշ հասնեիք, դուք ստիպված կլինեիք պառկել բացօթյա, ինչպես ձեր հայրենակիցներից շատերը, որոնք օթևանում են Անդերնախից այն կողմը: Ինձ մոտ բոլոր տեղերը գրավված են. եթե ցանկանում եք անպայման պառկել մի լավ անկողնում, ապա ես միայն իմ սեփական սենյակը կարող եմ տրամադրել ձեզ:

Գալով ձեր ձիերին, ես դրանց համար հարդ փռել կտամ բակի մի անկյունում: Այսօր իմ ախոռը լիքն է քրիստոնյաներով: Պարոնները Ֆրանսիայի՞ց են գալիս,— հարցրեց նա մի փոքր դադարից հետո:

— Բոննից,— բացականչեց Պրոսպերը:— Եվ առավոտվանից մենք դեռ ոչինչ չենք կերել:

— Օհո՜, ինչ վերաբերում է սննդին,— ասաց պանդոկապետը, թափահարելով գլուխը,— տասը մղոն շառավղի վրա գտնվող ամբողջ շրջանից «Կարմիր պանդոկն» են գալիս խրախճանք անելու: Դուք կունենաք իշխանավայել հյուրասիրություն: Հռենոսի թարմ ձուկ էլ կունենանք, ինչ ասել կուզի:

Իրենց հոգնաբեկ երիվարները պանդոկի տիրոջ խնամքին հանձնելուց հետո, որը բավականին ապարդյուն կերպով կանչում էր իր սպասավորներին, բուժակները մտան պանդոկի ընդհանուր սրահը: Ծխողների հոծ բազմության կողմից արտաշնչված թանձր ու սպիտակավուն ամպերը նախապես նրանց թույլ չտվին նշմարելու այն մարդկանց, որոնց հետ նրանք պետք է գտնվեին: Բայց, երբ նրանք արդեն նստած էին սեղանի շուրջը, ճանապարհորդներին հատուկ փիլիսոփայական համբերատարությամբ գիտակցելով աղմկալի պահանջների անօգուտ լինելը, ծխախոտի գոլորշիների միջով նրանք կարողացան իրարից տարբերել գերմանական պանդոկի պարտադիր մասը կազմող բաները՝ վառարանը, պատի ժամացույցը, սեղանները, գարեջրի փարչերը, երկար ծխամորճները, այս ու այն կողմ հրեական կամ գերմանական արտառոց դեմքեր, ապա մի քանի նավավարների կոշտ կերպարանքներ: Ֆրանսիացի բազմաթիվ սպաների ուսադիրները հուրհրատում էին այդ մշուշի մեջ, և խթաններն ու թրերը անվերջ զրնգում էին սալահատակի վրա: Ոմանք թուղթ էին խաղում, ուրիշները վիճում, լռում, ուտում, խմում էին կամ անցուդարձ անում սենյակում: Մի գեր փոքրահասակ կին, թավշյա, սև գդակը գլխին, արծաթափայլ, կապույտ կրծկալով, բարձիկով, բանալիների տրցակով, արծաթյա ճարմանդով, մազերը հյուսված,— սրանք տարբերիչ նշաններն են գերմանական պանդոկների բոլոր տիրուհիների, որոնց շորերն արդեն այնքան ճշգրտորեն են պատկերացված բազմաթիվ գրավյուրներում, որ ավելորդ է դրանք նկարագրել,— մի խոսքով պանդոկապետի կինը հիանալի ճարպկությամբ մերթ համբերություն էր ներշնչում, մերթ համբերությունից հանում մեր երկու բարեկամներին: Աղմուկն աստիճանաբար նվազեց, ճանապարհորդները հեռացան և ծխի ամպը փարատվեց: Երբ բուժակների առջև դրվեցին սպասներն ու Հռենոսի ծածանը երևաց սեղանի վրա, ժամը տասնմեկն էր խփում, և սրահը դատարկ էր: Գիշերվա լռության մեջ տարտամորեն լսվում էին և՛ ձիերի խրխնջյունն ու խոտի խշխշոցը նրանց ատամների տակ, և՛ Հռենոսի ջրերի մրմունջը, և այդ մի տեսակ անբացատրելի շշուկները, որոնք կենդանություն են տալիս լեփ-լեցուն մի պանդոկի, երբ յուրաքանչյուրը պատրաստվում է պառկելու: Դռներն ու պատուհանները բացվում և փակվում էին, ձայները շշնջում էին տարտամ խոսքեր, և մի քանի բացականչություններ արձագանքում էին սենյակներում: Այդ լռության ու ժխորի պահին, երկու ֆրանսիացիները և պանդոկապետը, որն զբաղված էր նրանց գովելով Անդերնախը, կերակուրները, Հռենոսի իր գինին, ռեսպուբլիկական բանակն ու իր կնոջը, մի տեսակ շահագրգռվածությամբ լսեցին մի քանի նավավարների խոպոտ կանչերը, և նավահանգիստ մտնող ինչ-որ մի նավի ճողփյունը: Անտարակույս, պանդոկապետն ընտելացած լինելով այդ նավավարների կոկորդային բացականչություններին, հապշտապ դուրս վազեց և շուտով վերադարձավ: Նա իր հետ բերեց մի փոքրահասակ, գեր մարդու, որի հետևից քայլում էին երկու նավավարներ՝ կրելով մի ծանր ճամպրուկ և մի քանի հակ: Իր ծանրոցները սրահում տեղավորելուց հետո, փոքրահասակ մարդն անձամբ վերցրեց իր ճամպրուկը և այն պահեց իր մոտ՝ առանց ձևականության սեղան նստելով երկու բուժակների դիմաց:

— Գնացեք պառկելու ձեր նավում,— ասաց նա նավավարներին,— քանի որ պանդոկը լեփ-լեցուն է: Բոլոր նկատառումներով այդ ավելի լավ է:

— Պարո՛ն,— ասաց պանդոկապետը նորեկին,— ահա այն բոլորը, ինչ ինձ մնում է կենսամթերքից: Եվ նա ցույց տվեց ֆրանսիացիներին մատուցված ընթրիքը:

— Չունեմ նույնիսկ մի կտոր հաց, մի ոսկոր:

— Իսկ թթու կաղամբ չունե՞ք:

— Բոլորը մաքրել են:

— Եվ ինչպես պատիվ ունեցա ձեզ ասելու, դուք չեք կարող ունենալ ուրիշ անկողին, բացի այն աթոռից, որի վրա գտնվում եք և ուրիշ սենյակ, բացի այս սրահից:

Լսելով այս խոսքերը, փոքրահասակ մարդը պանդոկապետի սրահի և երկու ֆրանսիացիների վրա գցեց մի այնպիսի հայացք, ուր հավասարապես արտահայտվեցին զգուշավորությունն ու սարսափը:

— Պետք է ձեզ դիտել տամ,— ասաց պարոն Հերմանը՝ ընդհատելով,— որ մենք երբեք չիմացանք այդ անծանոթի ո՛չ իսկական անունը, ո՛չ պատմությունը, միայն, նրա թղթերը հայտնեցին, որ նա գալիս էր Ախենից, թղթերում անվանվում էր Վալենֆեր, և սեփականատեր էր Նեյվիդի մոտ գտնվող գնդասեղի բավականին մեծ մի ֆաբրիկայի: Ինչպես այդ երկրի բոլոր ֆաբրիկանտները, նա հագին ուներ հասարակ կերպասից մի սերթուկ, մուգ կանաչ գույնի մի տափատ, թավշյա մի բաճկոնակ, երկարաճիտք կոշիկներ և մի լայն գոտի: Նրա դեմքը կլոր էր, մաներներն անկեղծ ու սիրալիր: Սակայն այդ երեկո նրան չհաջողվեց լրիվ կերպով քողարկել ինչ-որ թաքուն երկյուղ, կամ գուցե, սաստիկ մտատանջություններ: Պանդոկապետը հետո այն կարծիքն էր հայտնել, որ այս գերմանացի վաճառականը փախչում էր երկրից: Ավելի ուշ ես իմացա, որ նրա ֆաբրիկան հրկիզվել էր մի այնպիսի դիպվածով, որ այնքան հաճախադեպ են պատերազմի ժամանակ: Չնայած ընդհանրապես մտահոգ նրա արտահայտությանը, դեմքը երևան էր բերում մեծ բարեսրտություն: Նրա դիմագծերը հաճելի էին, հաստ վիզն աչքի էր ընկնում սպիտակությամբ և այնպես ընդգծվում սև փողկապով, որ Վիլհելմն այն մատնացույց արեց Պրոսպերին:

Այստեղ Տայֆերը մի բաժակ ջուր խմեց:

— Պրոսպերը քաղաքավարությամբ առաջարկեց վաճառականին մասնակցել իրենց ընթրիքին, և Վալենֆերը առանց ձևականության ընդունեց, որպես մի մարդ, որը կարող էր գնահատել այդ քաղաքավարությունը: Նա գետին պառկեցրեց իր ճամպրուկը, ոտքերը դրեց վրան, վերցրեց գլխարկը, մոտեցավ սեղանին, հանեց ձեռնոցները և երկու ատրճանակ, որ նա պահում էր իր գոտում: Պանդոկապետը շտապ բերեց ափսե, և երեք հյուրերն սկսեցին բավականին լուռ հագուրդ տալ իրենց ախորժակին: Սրահում այնպես տոթ էր և ճանճերն այնքան շատ էին, որ Պրոսպերը պանդոկապետին խնդրեց բացել դեպի նավահանգիստը նայող պատուհանը, որպեսզի օդը մաքրվի: Այդ լուսամուտը պաշտպանված էր երկաթյա ձողով, որի երկու ծայրերը մտնում էին խորշի երկու անկյուններում գտնվող բների մեջ: Ավելի ապահով լինելու համար յուրաքանչյուր փակոցափեղկին դա ամրացվում էր երկու պտուտակներով: Պրոսպերը, պատահաբար հայացքը նետելով լուսամուտին, տեսավ, թե պանդոկապետն ինչպիսի՛ բարդ ձևով էր բաց անում այն:

— Բայց քանի որ ես խոսեցի գործողության վայրի մասին,— ասաց պարոն Հերմանը,— ես պետք է ձեզ նկարագրեմ պանդոկի ներքին դասավորությունը, որովհետև տեղանքի ճշգրիտ ճանաչումից է կախված այս պատմության ճիշտ ըմբռնումը: Այն սրահը, ուր գտնվում էին այդ երեք անձնավորությունները, որոնց մասին հիշատակեցի, ելքի երկու դուռ ուներ: Մեկը բացվում էր Անդերնախ տանող այն ճանապարհի վրա, որն անցնում է Հռենոսի երկայնքով: Հենց պանդոկի

առջևում գտնվում էր նավամատույցը, ուր կանգնած էր վաճառականի կողմից իր ճանապարհորդության համար վարձակալած նավը: Մյուս դուռը դուրս էր գալիս պանդոկի բակը: Այդ բակը շրջապատված էր շատ բարձր պատերով և այդ գիշերը լիքն էր կենդանիներով ու ձիերով, որովհետև ախոռներում էլ մարդիկ էին պառկած: Դարպասն այնքան խնամքով էր բարիկադվել, որ ավելի արագ շարժվելու համար պանդոկապետը վաճառականին և նավավարներին մտցրել էր սրահի այն դռնով, որը դեպի փողոցն էր նայում: Պրոսպեր Մանյանի ցանկության համաձայն պատուհանը բանալուց հետո, պանդոկապետը փակեց այդ դուռը, սահեցրեց ձողերն իրենց բների մեջ և ամրացրեց պտուտակները: Տանտիրոջ սենյակը, ուր պետք է պառկեին երկու բուժակները, ընդհանուր սրահին կից էր և բավական թեթև մի պատով բաժանված էր խոհանոցից: Պանդոկի տիրուհին և ամուսինը, հավանաբար գիշերը պետք է անցկացնեին խոհանոցում: Սպասուհին դուրս էր եկել արդեն և գնացել իր համար տեղ գտնելու մի որևէ խցիկում, ձեղնահարկի անկյունում կամ մի որևէ այլ տեղ: Հեշտ հասկանալի է, որ ընդհանուր սրահը, տանտիրոջ սենյակն ու խոհանոցը մի տեսակ առանձնացված էին պանդոկի մյուս մասերից: Բակում կային երկու խոշոր շներ, որոնց հաչոցներից երևում էր, թե դրանք աչալուրջ ու խիստ դյուրագրգիռ պահապաններ էին:

— Ի՜նչ լռություն և ի՜նչ գեղեցիկ գիշեր,— ասաց Վիլհելմը՝ նայելով երկնքին, երբ տանտերն արդեն փակել էր դուռը: Ջրերի ճողփյունն այդ պահին լսվող միակ աղմուկն էր:

— Պարոննե՛ր,— ասաց վաճառականը երկու ֆրանսիացիներին,— թույլ տվեք ինձ ձեզ հյուրասիրել մի քանի շիշ գինիով՝ թրջելու համար ձեր ծածանը: Մենք օրվա հոգնածությունը կթոթափենք և կհանգստանանք՝ խմելով: Ձեր կերպարանքից և ձեր հագուստների վիճակից ես տեսնում եմ, որ դուք, ինչպես ինքս, շատ ճանապարհ եք կտրել այսօր:

Երկու բարեկամները համաձայնվեցին և պանդոկապետը դուրս եկավ խոհանոցի դռնից, գնալու իր նկուղը, որը, անտարակույս, գտնվում էր շենքի այդ մասի տակ: Երբ պանդոկապետի բերած հինգ պատկառելի շշերը դրվեցին սեղանի վրա, նրա կինը մատուցում էր վերջին պնակը: Սրահի և կերակուրների վրա զցելով տանտիրուհու իր հայացքը, վստահ, թե կատարել էր ճանապարհորդների բոլոր պահանջմունքները, մտավ իր խոհանոցը: Չորս հյուրերը (որովհետև տանտերը հրավիրված էր խմելու) չիմացան նրա պառկելը, բայց ավելի ուշ, խմողների զրույցն ընդհատող կարճատև լռության ընթացքում, մի քանի ուժեղ խռմփոցներ, որոնք առավել ևս հնչեղանում էին ձեղնախորշի սնամեջ տախտակների միջով, ժպիտներ հարուցեցին բարեկամների, մանավանդ պանդոկատիրոջ դեմքին: Կեսգիշերվա մոտերքը, երբ սեղանի վրա այլևս բան չկար, բացի բիսկվիտից, պանրից, չոր մրգից և ընտիր գինուց, հյուրերը, հատկապես երիտասարդ ֆրանսիացիները, սրտաբաց դարձան. նրանք խոսեցին իրենց երկրից, իրենց ուսումից, պատերազմից: Վերջապես, խոսակցությունն աշխուժացավ: Պրոսպեր Մանյանը հուզեց փախստական վաճառականին. սրա աչքերը թրջվեցին, երբ պիկարդացու սրտաբացությամբ և ազնիվ ու զորովալի բնավորություն ունեցող մարդու պարզամտությամբ նա բարձրաձայն մտածեց, թե արդյոք ի՞նչ էր անում իր մայրն այդ րոպեին, երբ նրա որդին գտնվում էր Հռենոսի ափերին:

— Ես նրան տեսնում եմ,— ասում էր նա,— պառկելուց առաջ իր երեկոյան աղոթքն ասելիս: Իհարկե նա ինձ չի մոռանում, և նա պետք է իրեն հարց տա. «Արդյոք ո՞ւր է իմ խեղճ Պրոսպերը»: Սակայն, եթե խաղում նա իր հարևանուհուց շահել է մի քանի սու, ապա նա գնում է դրանք դնելու կարմիր կավե մեծ կճուճի մեջ, ուր նա հավաքում է անհրաժեշտ գումարը՝ գնելու համար այն երեսուն արպան հողը, որը ներփակված է Լեշվիլի իր կալվածքում: Բայց այդ երեսուն արպանը արժե մոտավորապես վաթսուն հազար ֆրանկ. դրանք հիանալի մարգագետիններ են: Ա՜հ, եթե երբեք մի օր դրանք ունենայի, ես իմ ամբողջ կյանքը կանցկացնեի Լեշվիլում՝ առանց փառասիրության: Քանի՜, քանի՜ անգամներ հայրս փափագել էր ունենալ այդ երեսուն արպանը և

այն սիրուն առվակը, որը օձագալար անցնում է այդ մարգագետինների միջով: Բայց նա մեռավ և չգնեց դրանք: Փողը հերիք չէր անում: Երեխա ժամանակ ես այնտեղ շատ եմ խաղացել:

— Պարոն Վալենֆեր, դուք ևս ունե՞ք ձեր թաքուն իղձը,— հարցրեց Վիլհելմը:

— Այո՛, պարոն, այո՛, և արդեն իրագործվում էր, սակայն, այժմ…— ծերունին լռեց, չավարտելով իր խոսքը:

— Ես,— ասաց պանդոկապետը, որի դեմքը թեթևորեն կարմրել էր,— անցյալ տարի գնել եմ որմնափակված մի հողաշերտ, որ տասը տարի է, ինչ ցանկանում էի ունենալ:

Նրանք այսպես խոսեցին, գինուց լեզուներն արձակված մարդկանց նման, և միմյանց հանդեպ տածեցին այդ վաղանցիկ բարեկամությունը, ինչ մենք շատ քիչ ենք խնայում ճանապարհորդելիս, այնքան որ, այն պահին, երբ նրանք գնացին պառկելու, Վիլհելմն իր մահճակալն առաջարկեց վաճառականին:

— Դուք կարող եք այն ընդունել առանց տատանվելու, քանի որ ինքս կարող եմ պառկել Պրոսպերի հետ. դա, անշուշտ, կլինի ոչ առաջին, ոչ էլ վերջին անգամը: Դուք մեր ավագն եք, մենք պարտավոր ենք հարգել ծերությունը:

— Բա՛հ,— ասաց տանտերը,— իմ կնոջ մահճակալն ունի մի քանի ներքնակ, դրանցից մեկը կփռեք հատակին:

Եվ նա գնաց փակելու պատուհանը, հանելով այնպիսի աղմուկ, որպիսին պահանջում էր զգուշության այդ գործողությունը:

— Ընդունում եմ,— ասաց վաճառականը:— Ես խոստովանում եմ,— ավելացրեց նա, ցածրացնելով իր ձայնը և նայելով երկու բարեկամներին,— որ ինքս ցանկանում էի այդ. իմ նավավարներն ինձ կասկածելի են թվում: Ես ամենևին էլ դժգոհ չեմ այս մի գիշերն անցկացնելու երկու ազնիվ ու քաջարի երիտասարդների, ֆրանսիացի երկու զինվորականների ընկերակցությամբ: Իմ ճամպրուկում ես ունեմ հարյուր հազար ֆրանկ ոսկով ու ադամանդներով:

Սիրալիր վերապահությունը, որով երկու երիտասարդներն ընդունեցին այդ անզգուշաբար հայտնված գաղտնիքը, վստահություն ներշնչեց բարեմիտ գերմանացուն: Տանտերն օգնեց իր ճանապարհորդներին բացելու անկողիններից մեկը: Ապա, երբ ամեն ինչ լավագույնս կարգավորվեց, նա նրանց բարի գիշեր մաղթեց և գնաց պառկելու: Վաճառականն ու երկու բուժակները կատակեցին իրենց բարձերի յուրօրինակության վրա: Պրոսպերը իր և Վիլհելմի բժշկական գործիքների պայուսակները տեղավորեց իր բարձի տակ, որպեսզի այն բարձրացնի՝ մինչդեռ Վալենֆերն առավել զգուշության համար, իր ճամպրուկը դրեց իր գլխի տակ:

— Մենք երկուսով կքնենք մեր գանձի վրա, դուք ձեր ոսկու, ես իմ գործիքների վրա: Հետաքրքիր է, իմ գործիքները կբերե՞ն այնքան ոսկի, որքան դուք եք վաստակել:

— Դուք այդ կարող եք հուսալ,— ասաց վաճառականը:— Աշխատանքն ու ուղղամտությունը կհաղթահարեն ամեն ինչ, բայց դուք համբերություն ունեցեք: Շուտով Վալենֆերը և Վիլհելմը քնեցին: Անկողնու շատ կոշտ լինելուց էր, թե իր չափազանց հոգնածությունից, որ անքնություն էր պատճառում, կամ թերևս իր հոգու ճակատագրական տրամադրությունից, Պրոսպեր Մանյանը արթուն մնաց: Նրա մտքերը վտանգավոր ընթացք ընդունեցին. նա բացարձակորեն մտածեց հարյուր հազար ֆրանկի մասին, որի վրա քնում էր վաճառականը: Նրա համար հարյուր հազար

ֆրանկը պատրաստի մի հսկայական հարստություն էր: Նա սկսեց այն օգտագործել հազար ու մի տարբեր եղանակներով, օդային դղյակներ կառուցելով, ինչպես բոլորս ուրախությամբ ենք անում մեր քնին նախորդող պահին, այն ժամին, երբ պատկերները տարտամորեն ծնվում են մեր իմացության մեջ, և երբ, հաճախ, գիշերվա լռության մեջ, մտածողությունը գործում է մոգական ուժգնությամբ: Նա իր երազանքում իրագործում էր իր մոր ցանկությունը, գնում էր երեսուն արպան մարգագետինը, ամուսնանում էր բովեցի մի օրիորդի հետ, որի հանդեպ, առայժմ, իրենց հարստությունների անհամաչափությունը նրան արգելում էր հավակնություն ունենալ: Այդ գումարով նա իր համար սարքում էր քաղցր վայելքների մի ամբողջ կյանք և իրեն տեսնում երջանիկ, ընտանիքի հայր, հարուստ, իր պրովինցիայում հարգված և գուցե, Բովեի մեր: Պիկարդացու նրա գլուխը տաքանալով՝ նա որոնեց իր մտապատկերներն իրականություն դարձնելու միջոցներ: Նա արտասովոր ոգևորությամբ հղացավ ոճիրը. առայժմ թեորիապես նա երազում էր վաճառականի մահվան մասին, միևնույն ժամանակ հստակորեն տեսնելով ոսկին և ադամանդները: Նրա աչքերը դրանցով շլացած էին: Սիրտը բաբախում էր: Վճիռ ընդունելու ուղղությամբ արած խորհրդածությունը, անտարակույս, արդեն իսկ ոճրագործություն էր: Այդ ոսկու զանգվածով հմայված, նա հոգեպես արբեց մարդասպանի դատողություններով. նա ինքն իրեն հարց տվեց, թե արդյոք այդ խղճուկ գերմանացին կարիք ունե՞ր ապրելու, և իրեն համոզեց, որ նա ընդհանրապես կարող էր գոյություն չունենալ: Կարճ ասած, նա մտահղացավ ոճիրն այնպիսի եղանակով, որպեսզի անպատիժ մնա: Հռենոսի մյուս ափը գրավված էր ավստրիացիների կողմից, պատուհանի տակ կար մի նավակ և նավավարներ. նա կարող էր կտրել այդ մարդու գլուխը, նրա մարմինը նետել Հռենոսի մեջ, վերցնել ճամպրուկը, փախչել լուսամուտով, ոսկի առաջարկել նավավարներին ու անցնել Ավստրիա: Մինչև իսկ նա հաշվեց, թե ինքը ի՞նչ աստիճանի ճարպկություն էր ձեռք բերել վիրաբույժի իր գործիքներն օգտագործելիս՝ կտրելու համար իր զոհի գլուխն այնպիսի եղանակով, որպեսզի սա ոչ մի ճիչ չկարողանար արձակել:

Այստեղ պարոն Տայֆերը սրբեց իր ճակատը և մի քիչ էլ ջուր խմեց:

— Պրոսպերը վեր կացավ դանդաղորեն և առանց շշուկի: Վստահ, թե ոչ ոքի չէր արթնացրել, նա հագնվեց, դուրս եկավ ընդհանուր սրահը, ապա, ճակատագրական այն խելամտությամբ, որ մարդ հանկարծակիորեն գտնում է իր մեջ, վճռականության ու տակտի այն զորությամբ, որը երբեք չի պակասում ո՛չ կալանավորներին, ո՛չ ոճրագործներին իրենց ծրագրած գործը կատարելիս՝ նա քանդեց երկաթե ձողերի պտուտակները, իրենց բներից հանեց ձողերն առանց ամենաթեթև աղմուկի, դրանք տեղավորեց պատի մոտ և բացեց փեղկերը, ճնշելով ծխնիների վրա, որպեսզի խլացնի դրանց ճռինչը: Լուսնյակն իր դժգույն շողքը գցած լինելով այդ տեսարանի վրա, նրան թույլ տվեց աղոտ կերպով տեսնել առարկաները այն սենյակում, որտեղ քնած էին Վիլհելմն ու Վալհենֆերը: Այստեղ, ինչպես հետո ինձ ասաց, նա մի րոպե կանգ է առնում: Նրա սրտի բաբախումներն այնքան էին ուժեղ, այնքան խորունկ, այնքան հնչեղ, որ նա, կարծես, դրանից սարսափած էր: Այնուհետև, նա վախենում էր, թե չի կարողանա գործել սառնասրտությամբ. ձեռքերը դողում էին, և նրան թվում էր, թե ոտքերի թաթերը հենված են հրաշեկ ածխակտորների վրա: Սակայն, այնքան երջանկություն էր ուղեկցում իր մտադրած գործի կատարմանը, որ նա մի տեսակ նախասահմանվածություն տեսավ այն բանում, ինչ բախտն էր շնորհում իրեն: Նա բացեց պատուհանը, վերադարձավ սենյակ, վերցրեց պայուսակը, փնտրեց վիրաբուժական ամենահարմար դանակը, որով պետք է ավարտեր իր ոճիրը:

«Երբ հասա մահճակալի մոտ, ես մեքենաբար դիմեցի աստծու օգնությանը»,— պատմում էր նա ինձ: Նույն րոպեին երբ, հավաքելով իր ամբողջ ուժը, բարձրացնում էր իր բազուկը, նա, կարծես իր մեջ լսում է ինչ-որ ձայն, և նրան այնպես է թվում, թե ինչ-որ լույս է տեսնում: Նա դանակը գցում է իր անկողնի վրա, փախչում մյուս սենյակը և գնում, կանգնում պատուհանի առաջ: Նա այնտեղ

ամենախոր նողկանքն ունեցավ ինքն իր հանդեպ, և զգալով, որ առաքինությունը նրա մեջ դեռևս թույլ էր, վախենալով, որ կարող էր տեղի տալ այն կախարդանքին, որով տարվել էր, նա արագ դուրս է թռչում պատուհանից դեպի փողոց և թափառում Հռենոսի երկայնքով, այսպես ասած ժամապահություն անելով պանդոկի առաջ: Հաճախ, իր փութկոտ պտույտի ընթացքում նա հասնում է մինչև Անդերնախ, հաճախ էլ քայլերն առաջնորդում էին նրան դեպի այն սարալանջը, որով նա իջել էր պանդոկ գալու համար: Բայց, գիշերվա լռությունն այնքան էր խոր, և նա այնքան մեծ վստահություն ուներ պահապան շների վրա, որ նա, երբեմն, տեսադաշտից կորցրեց բաց թողած պատուհանը: Նրա նպատակն էր՝ հոգնել, որպեսզի կարողանար քնել: Մինչ այդ, այսպես քայլելով ջինջ երկնքի տակ, զմայլվելով գեղեցիկ աստղերով, գուցե և գիշերվա մաքուր օդի, ինչպես նաև ջրերի մելամաղձոտ ներգործությամբ, նա խորասուզվեց մի այնպիսի երազանքի մեջ, որը աստիճանաբար նրան ետ բերեց դեպի բարոյականության առողջ գաղափարները: Բանականությունն ի վերջո փարատեց նրա ունեցած բոպեական խելացնորությունը: Երբ նա վերադարձավ, դաստիարակների խրատները, կրոնական պատվիրանները և մանավանդ, ասում էր ինձ, հայրենի կտուրի տակ նրա մինչ այդ ապրած համեստ կյանքի պատկերները հաղթանակեցին, անհետ ջնջելով նրա հոռի գաղափարները: Երկար խոկումներից հետո, որոնց հմայքով նա տարվել էր Հռենոսի ափին, արմունկները հենած մի խոշոր քարի, նա կարող էր, ինչպես հետո ինձ ասաց, ոչ միայն քնել, այլ արթուն մնալ մի ամբողջ միլիարդ ռսկու մոտ: Այն պահին, երբ նրա ուղղամտությունը դուրս էր գալիս այդ մարտից հպարտ ու հզոր, նա ծնկի եկավ, հոգեզմայլության և ցնծության զգացմունքով համակված, և նա գոհություն հայտնեց աստծուն, իրեն գտնելով երջանիկ, թեթևացած, ուրախ, ինչպես իր առաջին հաղորդության օրը, երբ նա իրեն զգացել էր հրեշտակների արժանի, որովհետև նա իր օրն անց էր կացրել առանց ամենափոքր մեղքն անգամ անելու ո՛չ խոսքով, ո՛չ մտքով, ո՛չ գործով: Նա վերադարձավ պանդոկ, փակեց պատուհանը, առանց վախենալու աղմուկ բարձրացնելուց և անմիջապես մտավ անկողին: Հոգեկան ու ֆիզիկական հոգնածությունից սաստիկ թուլացած, անօգնական ու անզոր՝ քունը շուտով հաղթահարեց նրան: Գլուխը բարձի վրա դնելուց քիչ ժամանակ անց, նա սուզվեց այն առաջին ֆանտաստիկական թմբիրի մեջ, որը միշտ նախորդում է խորունկ քնի: Այդ ժամանակ զգայարանները թմրում են, և կյանքը ջնջվում է աստիճանաբար, մտքերն անավարտ են, և մեր զգայարանների վերջին խլրտումները նմանվում են մի տեսակ երազի: «Ի՜նչ ծանր է օդը,— ինքն իրեն ասաց Պրոսպերը,— ինձ թվում է, թե ինչ-որ խոնավ գոլորշի եմ շնչում»: Մթնոլորտի այդ երևույթը նա տարտամորեն բացատրեց սենյակի ջերմաստիճանի և դաշտավայրի մաքուր օդի միջև եղած տարբերությամբ: Բայց շուտով նա լսեց պարբերաբար կրկնվող ինչ-որ աղմուկ, բավական նման այն աղմուկին, որ աղբյուրի ջրի կաթիլներն են առաջացնում՝ ծորակից ընկնելիս: Խուճապի մատնվելով ինչ-որ հանկարծակի սարսափից, նա ուզեց վեր կենալ և կանչել պանդոկապետին, արթնացնել վաճառականին կամ Վիլհելմին: Սակայն, այդ բոպեին, դժբախտ ճակատագրականությամբ, նա հիշեց փայտե ժամացույցը, և կարծելով, թե նրա ճոճանակի շարժումն է լսում, նա քնեց այդ անորոշ ու տարտամ զգացողությամբ…

— Ջո՞ւր եք ուզում, պարոն Տայֆեր,— ասաց տանուտերը, տեսնելով որ բանկիրը մեքենայաբար ջրի շիշն էր վերցնում:

Շիշը դատարկ էր:

Մի փոքր դադարից հետո, որ առաջ էր եկել բանկիրի նկատողությունից, պարոն Հերմանը շարունակեց իր պատմությունը:

— Հաջորդ օրը առավոտյան,— ասաց նա,— Պրոսպեր Մանյանը արթնացավ մի մեծ աղմուկից: Նրան թվում էր, թե սուր ճիչեր է լսել, և նա զգում էր ներվերի այն սաստիկ լարվածությունը, այն մի

տեսակ սարսուռը, որ մենք ունենում ենք, երբ առավոտյան արթնանալիս ավարտվում է քնի ընթացքում սկսված մի տաժանելի զգացողություն: Մեր մեջ կատարվում է ինչ-որ ֆիզիոլոգիական բան, կոպիտ լեզվով ասած, մի ցնցում, որը դեռևս բավականին ուսումնասիրված չէ, չնայած որ հետաքրքիր երևույթներ է բովանդակում գիտության համար: Այդ սոսկալի տագնապը, որն առաջանում է, գուցե, քնի ընթացքում գրեթե միշտ անջատված մարդկային երկու բնությունների ակնթարթային միացումից, սովորաբար երկար չի տևում: Սակայն սա շարունակվեց դժբախտ բուժակի մոտ, նույնիսկ աճեց մի անգամից, նրան պատճառելով ամենաահավոր սոսկումը, երբ նա տեսավ իր տեղաշորի և Վալենֆերի մահճակալի միջև լճացած արյունը: Խեղճ գերմանացու գլուխը թավալված էր գետին, մարմինը մնացել էր մահճակալի վրա: Ամբողջ արյունը դուրս էր ժայթքել վզից: Տեսնելով նրա դեռևս բաց և սևեռուն աչքերը, տեսնելով արյունը, որը կեղտոտել էր իր սավանները, մինչև իսկ ձեռքերը, ճանաչելով իր վիրաբուժական դանակը մահճակալի վրա, Պրոսպեր Մանյանը ուշաթափվեց և ընկավ Վալենֆերի արյան մեջ: «Դա, ասում էր ինձ, իմ ունեցած մտքերի պատիժն էր»: Երբ ուշքի եկավ, նա իրեն գտավ ընդհանուր սրահում: Նստած էր մի աթոռի վրա, շրջապատված ֆրանսիացի զինվորներով, ուշադիր ու հետաքրքրասեր ամբոխի առջև: Նա ապշորեն նայում էր ռեսպուբլիկական մի սպայի, որը զբաղված էր մի քանի վկաների ցուցմունքները հավաքելով, անտարակույս, տեղեկագիրը շարադրելու համար: Նա ճանաչեց տանտիրոջը, նրա կնոջը, երկու նավավարներին և պանդոկի սպասուհուն: Մարդասպանի օգտագործած վիրաբուժական դանակը…

Այստեղ պարոն Տայֆերը հազաց, նա հանեց գրպանի թաշկինակը, որպեսզի խնչի, և սրբեց իր ճակատը: Բավականին բնական այս շարժումները միայն ինքս նկատեցի. բոլոր հյուրերը, աչքերը սևեռած պարոն Հերմանի վրա, մի տեսակ ագահությամբ լսում էին նրան: Մատակարարն արմունկը հենեց սեղանին, գլուխն առավ աջ ձեռքի մեջ և շեշտակի նայեց պարոն Հերմանին: Այդ րոպեից, նա հուզմունքի կամ շահագրգռվածության ոչ մի նշան ցույց չտվեց, սակայն նրա դեմքը մնաց մտախոհ ու հողագույն, ինչպես այն ժամանակ, երբ նա խաղացել էր 22ի խցանով:

— Մարդասպանի օգտագործած վիրաբուժական դանակը գտնվում էր սեղանի վրա, Պրոսպերի պայուսակի, դրամապանակի և թղթերի հետ միասին: Ամբոխի հայացքները հաջորդաբար ուղղվում էին ոճիրն ապացուցող այդ առարկաների և երիտասարդի վրա, որը օրհասական վիճակ էր ապրում, և որի մարած աչքերը, կարծես, ոչինչ չէին տեսնում: Դրսում լսվող տարտամ շշուկը հայտնում էր բազմության մասին, որն հավաքվել էր պանդոկի առաջ, ոճրի լուրն իմանալով, գուցե և մարդասպանին ճանաչելու ցանկությամբ: Սրահի պատուհանների տակ տեղավորված ժամապահների քայլերի և նրանց հրացանների աղմուկն իշխում էր հավաքված բազմության զրույցների շշուկին: Բայց պանդոկը փակված էր, բակը դատարկ էր ու լուռ: Չկարողանալով ուղիղ նայել տեղեկագիրը կազմող սպայի աչքերին, Պրոսպեր Մանյանը զգաց, որ մեկը սեղմում էր իր ձեռքը. նա բարձրացրեց իր հայացքը տեսնելու, թե ո՞վ էր իր պաշտպանն այս թշնամի ամբոխի մեջ: Համազգեստից նա ճանաչեց Անդերնախում տեղավորված կիսաբրիգադի ավագ վիրաբույժին: Բայց այդ մարդու նայվածքն այնքան էր խիստ ու հատու, որ խեղճ երիտասարդը սարսռաց և նրա գլուխը կախ ընկավ աթոռի կռնակին: Մի զինվոր նրան քացախ հոտոտեցրեց և նա անմիջապես ուշքի եկավ: Եվ սակայն նրա աչքերն այնքան այլայլված էին ու զուրկ կենդանությունից ու իմացականությունից, որ վիրաբույժը Պրոսպերի զարկերակը քննելուց հետո ասաց սպային.

— Կապիտա՛ն, այս մարդուն չի կարելի հարցաքննել այս րոպեին:

— Դե լա՛վ, տարեք նրան,— պատասխանեց կապիտանը, ընդհատելով վիրաբույժին և դիմելով մի տասնապետի, որը գտնվում էր բուժակի հետևում:

— Անիծված վախկոտ,— ասաց նրան զինվորը ցածրաձայն,— քայլելիս գեթ ջանա քեզ ուղիղ պահել այս նզովյալ գերմանացիների առջև, և մի խայտառակի Ռեսպուբլիկայի պատիվը:

Այդ խոսքերն սթափեցրին Պրոսպեր Մանյանին, որը վեր կացավ, մի քանի քայլ արեց, բայց, երբ դուռը բացվեց, երբ նա շնչեց դրսի օդը, երբ ամբոխը մղվեց դեպի նա, ուժը լքեց նրան, ծնկները թուլացան, նա երերաց:

— Այս բժշկացու լակոտը կրկնակի անգամ արժանի է մահվան: Դե քայլի՛ր,— ասացին երկու զինվորները, որոնք օգնում էին նրան, որպեսզի նա չընկնի:

— Օ՜, ստո՜ր, ստո՜ր, ի՜նքն է, ի՜նքն է, ահա՛ նա, ահա՛ նա:

Նրան թվում էր, թե այդ բառերն ասողը մի ընդհանուր ձայն էր, ամբոխի խռովահույզ ձայնը, որը հետևում էր նրան հայհոյելով և բազմանում յուրաքանչյուր քայլափոխին: Պանդոկից դեպի բանտ տանող ճանապարհին ամբոխի ու զինվորների բարձրացրած ժխորը, զանազան զրույցների աղմուկը, երկնքի կապույտը և օդի զովությունը, Անդերնախի տեսքը և Հռենոսի ջրերի մրմունջը, այդ տպավորությունները բուժակի հոգուն հասնում էին տարտամորեն, խառնակ, աղոտ, ինչպես այն բոլոր զգացողությունները, որ նա ունեցել էր արթնանալուց ի վեր: Երբեմն նրան թվում էր, թե ինքն այլևս գոյություն չունի:

— Այն ժամանակ ես բանտում էի,— ասաց պարոն Հերմանը, ընդհատելով:— Խանդավառ, ինչպես բոլորս ենք լինում քսան տարեկան հասակում, ես ցանկացել էի պաշտպանել իմ հայրենիքը և հրամանատարություն էի անում մի ազատ ջոկատի, որ ինքս էի կազմակերպել Անդերնախի մոտերքում: Դրանից մի քանի օր առաջ, գիշերով, ես ընկել էի ութ հարյուր մարդուց բաղկացած ֆրանսիական զորամասի մեջտեղը: Մենք հազիվ երկու հարյուր հոգի էինք: Լրտեսները մատնել էին ինձ: Ինձ նետեցին Անդերնախի բանտը: Հարցն այնպես էր դրված այն ժամանակ, որ վախեցնելու համար ժողովրդին, որպես օրինակ՝ ինձ պետք է գնդակահարեին: Ֆրանսիացիները խոսում էին ռեպրեսիաների մասին, սակայն այն սպանությունը, որի համար ռեսպուբլիկականներն ուզում էին վրեժ լուծել ինձնից, կուրֆյուրստի տիրապետության մեջ չէր կատարվել: Հայրս պահանջել էր և ստացել երեք օրվա տարկետում, որպեսզի գնար գեներալ Օժերոյի մոտ ինձ համար ներում խնդրելու և գեներալը հորս խնդիրքն ընդունեց: Ուրեմն ես տեսա Պրոսպեր Մանյանին այն րոպեին, երբ նա մտավ Անդերնախի բանտը, և նա խորապես շարժեց իմ գութը: Թեև նա գունատ էր, քայքայված, ընկճված, արյունով կեղտոտված, այնուամենայնիվ այնքան բարություն ու անմեղություն կար դրոշմված նրա դեմքի վրա, որ դա ինձ սաստիկ զարմացրեց ու հուզեց: Ինձ համար դա Գերմանիան էր, որն ապրում էր նրա երկար ու խարտյաշ մազերի մեջ, նրա կապույտ աչքերում: Իմ նվաղուն երկրի իսկական պատկերը. նա ինձ երևաց որպես զոհ, և ոչ թե որպես մարդասպան: Այն րոպեին, երբ նա անցավ իմ պատուհանի տակով, նա ժպտաց այն դառն ու մելամաղձոտ ժպիտով, ինչպիսին ունենում է խելագարը բանականության խուսափուկ մի նշույլի ժամանակ: Իհարկե, դա մարդասպանի ժպիտ չէր: Երբ ես տեսա բանտապահին, նրան հարցուփորձեցի իր նոր բանտարկյալի մասին:

— Խցիկում գտնվելուց ի վեր նա չի խոսել: Նստում է գլուխը ձեռքերի մեջ պահած, անշուշտ մտածում է իր գործի մասին: Ֆրանսիացիներն ասում են, որ վաղ առավոտյան դատարանում նրա հաշիվը կփակեն և քանչորս ժամից հետո նա գնդակահարվելու է:

Երեկոյան, այն կարճ ժամանակամիջոցում, որ ինձ շնորհված էր պտույտ կատարելու բանտի բակում, ես մնացի բանտարկյալի պատուհանի տակ: Մենք զրուցեցինք իրար հետ, և նա բացորոշությամբ ինձ պատմեց, թե ինչ է պատահել իր հետ, բավականին ճշգրտությամբ

պատասխանելով իմ հարցերին: Այդ առաջին զրույցից հետո, ես այլևս չէի կասկածում նրա անմեղության մասին: Խնդրեցի մի քանի ժամ մնալ նրա մոտ, և դա ինձ շնորհվեց: Ես ուրեմն նրան տեսա մի շարք անգամներ, և խեղճ տղան ինձ վստահեց իր բոլոր մտքերը: Հիշելով այն փորձությունը, որին դիմադրելու ուժ էր ունեցել, նա վախենում էր, թե, մի գուցե, քնի ընթացքում, լուսնոտության մի նոպայում, ինքը գործած լինի այն ոճիրը, որի մասին երազել էր արթուն վիճակում:

— Իսկ ձեր ուղեկի՞ցը,— ասացի ես:

— Օ՛,— բացականչեց նա ջերմորեն,— Վիլհելմն անընդունակ է...

Նա նույնիսկ չվերջացրեց:

Երիտասարդությամբ և առաքինությամբ տոգորված այդ ջերմ խոսքի վրա ես սեղմեցի նրա ձեռքը:

— Արթնանալուն պես,— շարունակեց նա,— անտարակույս, նա այնքան է ահաբեկվել, որ գլուխը կորցրած, փախած կլինի:

— Առա՛նց ձեզ արթնացնելու,— ասացի ես:— Բայց ձեր պաշտպանությունն ուրեմն հեշտ կլինի, եթե Վալհենֆերի ճամպրուկը գողացված չլինի:

Նա հանկարծ փղձկաց և հեկեկալով.

— Օ՛, այո՛, ես անմեղ եմ,— բացականչեց նա:— Ես չե՛մ սպանել. ես հիշում եմ իմ երազները. ես բռնելախաղ էի խաղում կոլեջի իմ ընկերների հետ: Հո ես չէի՞ կարող կտրել այդ վաճառականի գլուխը, քանի որ երազում ես խաղում էի:

Այնուհետև, չնայած հույսի նշույլներին, որոնք մեկ-մեկ նրան հանդարտություն էին տալիս, նա խղճի խայթից իրեն միշտ ջախջախված էր զգում: Չէ՞ որ նա իրոք բարձրացրել էր իր բազուկը կտրելու համար այդ վաճառականի գլուխը: Նա իրեն դատում էր և գտնում, թե իր սիրտը մաքուր չէ, քանի որ մտքով գործել էր ոճիրը:

— Եվ սակայն, ես բարի եմ,— բացականչում էր նա:— Օ՛հ, խե՛ղճ մայր: Այս րոպեին նա, գուցե, զվարթորեն իմպելիալ է խաղում հարևանուհիների հետ օթոցով իր փոքրիկ հյուրասրահում: Եթե նա իմանար, թե ես միմիայն բարձրացրել եմ ձեռքս մարդասպանություն գործելու… Օ՛, նա կմեռներ: Եվ ես բանտում եմ ոճրագործության մեղադրանքով: Թեև ես չեմ սպանել այդ մարդուն, բայց վստահորեն սպանելու եմ մորս:

Այս խոսքերն ասելով՝ նա լաց չեղավ, սակայն, համակվելով այն կարճատև ու սաստիկ կատաղությամբ, որը հատուկ է պիկարդցիներին, նա խոյացավ դեպի պատը, և եթե ես նրան չպահեի, ապա նա իր գլուխը կջախջախեր պատի դեմ:

— Սպասեցեք դատավարությանը,— ասացի,— դուք անպարտ կարձակվեք, դուք անմեղ եք: Հապա ձեր մայրը…

— Մա՛յրս,— բացականչեց նա կատաղությամբ,— նա ամենի՛ց առաջ կլսի իմ ամբաստանության մասին: Փոքր քաղաքներում այդպես է կարգը, խեղճ կինը վշտից կմեռնի: Չէ՞ որ ես ինձ անմեղ չեմ համարում: Դուք ուզո՞ւմ եք ամբողջ ճշմարտությունն իմանալ: Ես զգում եմ, թե կորցրել եմ իմ խղճի կուսությունը:

Այդ սոսկալի խոսքից հետո նա նստեց, խաչաձևեց իր թևերը կրծքի վրա, գլուխը կախ գցեց և մռայլ, նայեց գետնին: Այդ րոպեին բանտապահը եկավ հայտնելու, որ ես պետք է վերադառնամ իմ խուցը: Բայց դժգոհ, որ իմ ընկերոջը պետք է թողնեի մի այնպիսի րոպեում, երբ նա այնքան կորովաթափ էր երևում, բարեկամաբար ես նրան սեղմեցի իմ կրծքին:

— Համբերություն ունեցեք,— ասացի,— ամեն ինչ լավագույնս կկարգադրվի, գուցե: Եթե երբեք մի ազնիվ մարդու ձայնը կարող է փարատել ձեր կասկածները, ապա, իմացեք, որ ես ձեզ հարգում եմ և սիրում: Ընդունեցեք իմ բարեկամությունը և նիրհեցեք իմ սրտի վրա, եթե դուք հաշտ չեք ձեր սրտի հետ:

Հաջորդ օրը, ժամը իննի մոտերքը, մի տասնապետ և չորս հրացանակիր զինվորներ եկան տանելու բուժակին: Լսելով զինվորների աղմուկը, ես մոտեցա իմ պատուհանին: Երբ երիտասարդն անցավ բակով, նա աչքերը բարձրացրեց դեպի ինձ: Ես երբեք չեմ մոռանա այդ հայացքը, լի մտախոհությամբ, նախազգացումներով, համակերպվածությամբ և չգիտեմ ինչպիսի տխուր ու մելամաղձոտ շնորհալիությամբ: Դա եղավ մի տեսակ լուռ, բայց և այնպես հասկանալի կտակ, որով մի բարեկամը իր խորտակված կյանքը որպես ավանդ թողնում էր իր վերջին բարեկամին: Գիշերը, անտարակույս, շատ տաժանելի, շատ մենավոր էր եղել իր համար: Բայց միևնույն ժամանակ նրա դեմքի վրա դրոշմված դալկությունը հայտնում էր, գուցե, ինչ-որ ստոիցիզմ, որ նա գտել էր իր անձի հանդեպ մի նոր հարգանքի մեջ: Գուցե նա հոգով մաքրված էր, և կարծում էր, թե ինքը լվանում է իր մեղքը իր վշտի ու իր ամոթանքի մեջ: Նա քայլում էր վճռական քայլերով, իսկ, առավոտվանից ևեթ, նա մաքրել էր տվել արյան բծերը, որով նա ակամայից պղծվել էր:

— Ինչ-որ չարագուշակ ճակատագրականությամբ ձեռքերս թաթախվել են այդ արյան մեջ, երբ ես քնած էի, որովհետև իմ քունը միշտ էլ եղել է չափազանց անհանգիստ,— ասել էր նա ինձ նախորդ օրը, սոսկալիորեն հուսահատված:

Ես իմացա, որ նա պետք է կանգներ զինվորական դատարանի առջև: Դիվիզիան պետք է առաջ շարժվեր հաջորդ չէ մյուս օրը, և կիսաբրիգադի հրամանատարը չէր ուզում դուրս գալ Անդերնախից առանց արդարադատություն անելու նույն այն տեղում, որտեղ գործվել էր ոճիրը... Այնքան ժամանակ, որ տևեց ռազմական ատյանի այդ նիստը, ես մնացի մեռելային անձկությամբ համակված: Վերջապես, կեսօրվա դեմ Պրոսպեր Մանյանը ետ բերվեց բանտ: Այդ րոպեին ես իմ սովորական պտույտն էի կատարում: Նա ինձ նկատեց և եկավ նետվելու իմ թևերի մեջ:

— Ես կորած եմ,— ասաց նա:— Կորած եմ անհուսալի կերպով: Այստեղ բոլորի համար ես, ուրեմն, կլինեմ մարդասպան: Նա բարձրացրեց գլուխը հպարտորեն:— Այս անարդարությունը ողջ էությամբ ինձ վերադարձրեց իմ անմեղությունը: Իմ կյանքը միշտ էլ կլիներ խռովյալ. մահս կլինի անբիծ: Բայց, արդյոք գոյություն ունի՞ ապագա:

Ողջ տասնութերորդ դարն այս հանկարծակի հարցման մեջ էր: Նա մնաց մտածկոտ:

— Վերջապես,— ասացի ես,— դուք ինչպե՞ս պատասխանեցիք, ի՞նչ հարցրեցին ձեզ: Եղելությունը հո դուք նրանց միամտորեն չասացիք այնպես, ինչպես այն ինձ պատմեցիք: Նա մի րոպե աչքերը սևեռեց ինձ վրա. ապա, այդ սոսկալի դադարից հետո, տենդագին աշխուժությամբ նա ինձ պատասխանեց.

— Նախ ինձ հարցրեցին. «Դուք պանդոկից դուրս եկա՞ք գիշերով»: Ասացի.— «Այո»:— «Որտեղի՞ց»: Ես շիկնեցի և պատասխանեցի.— «Պատուհանից»:— «Դուք ուրեմն այն բացե՞լ էիք»:— «Այո՛», ասացի:— «Դուք դրանում չափից դուրս զգուշություն եք գործ դրել. պանդոկապետը ոչինչ չի լսել»:

Ես մնացի ապշած: Նավավարները հայտնեցին, որ նրանք ինձ տեսել էին շրջագայելիս՝ գնալով մերթ Անդերնախ, մերթ դեպի անտառ: Նրանց ասելով, ես մի քանի անգամ անցուդարձ արի, թաղեցի ոսկին ու ադամանդները: Վերջապես, ճամպրուկը չգտնվեց: Հետո, ես անընդհատ պայքարի մեջ էի իմ խղճի խայթի հետ: Երբ ուզում էի խոսել. «Դու ուզեցիր գործել այդ ոճիրը», գոռում էր մի անգութ ձայն ինձ վրա: Ամեն ինչ իմ դեմ էր, անգամ ինքս... Նրանք ինձ հարցուփորձեցին իմ ընկերոջ մասին, և ես նրան լրիվ պաշտպանեցի: Նրանք այն ժամանակ ինձ ասացին.— «Մենք հանցագործին փնտրում ենք ձեր, ձեր ընկերոջ, պանդոկապետի և նրա կնոջ մեջ: Առավոտյան բոլոր պատուհանները և դռները փակ էին»: Այդ դիտողության վրա ձայնս կտրվեց. ես ուժաթափվեցի, սիրտս սառեց: Լինելով ավելի վստահ իմ բարեկամի, քան իմ նկատմամբ՝ ես չէի կարող նրան ամբաստանել: Ես հասկացա, որ նրանք մեր երկուսին նայում էին այդ ոճրում որպես հավասարապես մեղսակիցների, և որ ես դրված էի առավել անճարակի տեղ: Ես ուզեցի ոճիրը բացատրել լուսնոտությամբ և արդարացնել իմ բարեկամին: Եվ այն ժամանակ ես սկսեցի զառանցել: Ես կորած եմ: Ես իմ դատավճիռը կարդացի իմ դատավորների աչքերում: Ո՛չ մի տարակուսանք: Վաղը ես պետք է գնդակահարվեմ: Ես այլևս չեմ մտածում իմ մասին,— շարունակեց նա,— այլ իմ խեղճ մորս մասին եմ մտածում:

Նա կանգ առավ, նայեց երկնքին և ոչ մի արցունք չթափեց: Նրա աչքերը չոր էին և սաստիկ այլայլված:

— Ֆրեդերիկը: Ա՜հ, մյուսը կոչվում էր Ֆրեդերիկ, Ֆրեդերիկ: Այո՛, ճիշտ ու ճիշտ այդ է նրա անունը,— բացականչեց պարոն Հերմանը հանդիսավորությամբ:

Հարևանուհիս ոտքով հրեց ինձ և ինձ նշան արեց, ցույց տալով պարոն Տայֆերին: Նախկին մատակարարն անփութորեն ձեռքով փակել էր աչքերը: Բայց, նրա մատների արանքից, մեզ թվաց, թե ինչ-որ մթին բոց ենք տեսնում նրա հայացքում:

— Հը՞,— ասաց հարևանուհիս ականջիս:— Եթե սրա անունը Ֆրեդերիկ լիներ:

Նրան պատասխանեցի, աչքով անելով՝ ասելու համար— «Լռություն»:

Հերմանը շարունակեց.

— Ֆրեդերիկը,— բացականչեց բուժակը,— Ֆրեդերիկն ինձ ստոր կերպով լքեց: Նա վախեցած կլինի: Նա, գուցե, թաքնվեց պանդոկում, որովհետև մեր երկու ձիերը առավոտյան դեռևս բակում էին:

— Ի՜նչ անըմբռնելի գաղտնիք,— ավելացրեց նա մի րոպե լռությունից հետո:— Լուսնոտությո՛ւն, լուսնոտությո՛ւն, ես կյանքումս լուսնոտության միայն մի նոպա եմ ունեցել, այդ էլ վեց տարեկան հասակում: Ինչո՞վ եմ ես գնալու այստեղից,— շարունակեց նա ոտքով գետնին խփելով:— Կտանեմ ինձ հետ այն բոլորը, ինչ բարեկամությունն է տալիս այս աշխարհում: Ես արդյոք կրկնակի՞ անգամ պետք է մեռնեմ, տարակուսելով եղբայրական մի այնպիսի բարեկամության վրա, որ սկսվել է հինգ տարեկան հասակում և շարունակվել է կոլեջում, ուսանողության շրջանում: Ո՞ւր է Ֆրեդերիկը:— Նա լաց եղավ:— Մենք ուրեմն կապված ենք լինում ավելի շատ մի-մի զգացմունքի, քան թե կյանքին:— Գնանք,— ասաց նա,— ես գերադասում եմ լինել իմ խցիկում: Ես չեմ ուզում, որ ինձ տեսնեն լաց լինելիս: Ես մահվան կգնամ քաջաբար, բայց ես չգիտեմ անժամանակ հերոսություն անել և խոստովանում եմ, որ ես ափսոսում եմ իմ մատաղ ու գեղեցիկ կյանքը: Ես այս գիշեր չեմ քնել և իմ կյանքից դրվագներ եմ վերհիշել, ես ինձ տեսել եմ այն մարգագետիններում վազելիս, որոնց հիշատակը, գուցե, իմ կորստյան պատճառը հանդիսացավ:— Ես ունեի ապագա,— ասաց

նա՝ ընդհատելով։— Իսկ հիմա տասներկու մարդ. կրտսեր մի լեյտենանտ, որը կհրամայի. «Զենքերը վե՛ր, նշա՛ն բռնել, կրա՛կ», թմբուկների դղրդյունը, և ինձնից որպես հիշատակ՝ խայտառակություն. ահա թե այժմ ինչ է լինելու իմ ապագան։ Օ՜, ինչ-որ մի աստված կա, այլապես այս բոլորը չափազանց հիմար կլիներ։ Այնուհետև նա ինձ առավ իր թևերի մեջ և ամուր ողջագուրելով.— Օ՜,— գոչեց նա,— դուք վերջին մարդն եք, որին ես բացած կլինեմ իմ սիրտը։ Դուք կազատվեք, կտեսնեք ձեր մորը։ Ես չգիտեմ, հարո՞ւստ եք, թե աղքատ, բայց դա ի՞նչ նշանակություն ունի. դուք ինձ համար ամբողջ աշխարհն եք։ Սրանք հո միշտ էլ չեն կռվի։ Դե ուրեմն, երբ հաշտություն լինի, գնացեք Բովե։ Թե որ մայրս շարունակեց ապրել իմ չարաղետ մահվան լուրն առնելուց հետո, դուք նրան կգտնեք այնտեղ։ Նրան ասեք այս մխիթարական խոսքը. **«Նա անմեղ էր»**։— Նա ձեզ կհավատա,— շարունակեց նա,— ես նրան կգրեմ։ Բայց դուք նրան կտանեք իմ վերջին հայացքը, նրան կասեք, թե դուք իմ համբուրած վերջին մարդն եք եղել։ Օ՜հ, նա ինչքան պիտի սիրի ձեզ, խեղճ կինը, ձե՛զ, որ իմ վերջին բարեկամն եք։— Այստեղ,— ասաց նա մի բոպե լռությունից հետո, որի ընթացքում նա, կարծես, մնաց խորտակված իր հուշերի ծանրության տակ,— հրամանատարներն ու զինվորներն ինձ անծանոթ են, և ես նրանց բոլորին նողկանք եմ պատճառում։ Առանց ձեզ՝ իմ անմեղությունը պիտի մնար գաղտնիք աստծու և իմ միջև։ Ես նրան երդվեցի սրբությամբ կատարել իր վերջին ցանկությունը։ Իմ խոսքերը, իմ սրտազեղումը նրան հուզեցին։ Քիչ ժամանակ անց զինվորները վերադարձան նրան ետ տանելու համար ռազմական ատյանի առաջ։ Նա մահվան դատապարտվեց։ Ես չգիտեմ այն ձևականությունները, որոնք պետք է հաջորդեին կամ ուղեկցեին այդ առաջին դատավճռին, չեմ իմանում, արդյոք երիտասարդ վիրաբույժն իր կյանքը պաշտպանե՞ց, ինչպես պետքն էր, սակայն, նա սպասում էր, որ մահվան պետք է դիմավորեր հետևյալ օրը առավոտյան, և նա գիշերն անցկացրեց մորը գրելով։

— Մենք երկուսով կլինենք ազատ,— ասաց նա ինձ՝ ժպտալով, երբ հաջորդ օրը ես գնացի նրան տեսնելու.— ես իմացա, որ գեներալն ստորագրել է ձեր ներումը։ Ես մնացի և նայեցի նրան, որպեսզի նրա դիմագիծը դրոշմեմ իմ հիշողության մեջ։ Ապա նա զզվանքով ինձ ասաց.— Ես ստոր կերպով վախկոտ եմ եղել. գիշերն ամբողջ անց եմ կացրել, ներում խնդրելով այս պատերից։ Եվ նա ինձ ցույց էր տալիս խցիկի պատերը։— Այո՛, այո՛,— շարունակեց նա,— ես ոռնացել եմ հուսահատությունից, ըմբոստացել եմ, ես ապրել եմ հոգեկան տագնապներից ամենասարսափելին։— Ես միայնակ էի։ Այժմ, ես մտածում եմ, թե ի՞նչ պետք է ասեն մյուսները... Արիությունը՝ դա մի հանդերձանք է, որով պետք է զգեստավորվել։ Ես մահվան պետք է դիմավորեմ վայելչորեն... Ուստի...

ԵՐԿՈՒ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

— Օ՜, մի՛ ավարտեք,— բացականչեց դեռատի անձնավորությունը, որը «սոսկալի պատմություն» էր խնդրել և հանկարծակի ընդհատեց նյուրնբերգցուն։— Ես ուզում եմ մնալ անստուգության մեջ և հավատալ, թե նա փրկված է։ Եթե ես իմանամ, որ նա գնդակահարվեց, ես այս գիշեր չեմ քնի։ Վաղը դուք ինձ կասեք մնացածը։

Մենք վեր կացանք սեղանից։ Ընդունելով պարոն Հերմանի թևը, հարևանուհիս նրան ասաց.

— Նա գնդակահարվեց, այնպես չէ՞։

— Այո՛, ես ներկա եղա, երբ մահապատիժն ի կատար ածվեց։

— Դուք ինչպե՞ս, պարոն,— ասաց նա,— կարողացաք...

— Նա ինքն էր խնդրել այդ, տիկին: Չափազանց սոսկալի է հետևել մի կենդանի մարդու հուղարկավորությանը, մի մարդու, որին սիրում ես, և գիտես, որ անմեղ է: Այդ խեղճ երիտասարդը մի րոպե չդադարեց ինձ նայելուց: Թվում էր, թե նա միայն ինձնով էր ապրում: Չէ՞ որ նրա վերջին իրձն էր մորը տանել իր վերջին շունչը:

— Իսկ դուք տեսա՞ք նրա մորը:

— Երբ կայացավ Ամիենի հաշտությունը, ես եկա Ֆրանսիա մորը բերելու այս գեղեցիկ խոսքը. «Նա անմեղ էր»: Ես կրոնական երկյուղածությամբ էի ձեռնարկել այդ ուխտագնացությունը: Բայց տիկին Մանյանը մահացել էր՝ հյուծվելով: Ես, իհարկե, խորունկ հուզմունքով այրեցի իմ բերած նամակը: Դուք գուցե ծիծաղեք գերմանական իմ հուզավառության վրա, բայց ես վսեմ մելամաղձոտությամբ լի մի ողբերգություն տեսա այդ գաղտնիքում, որը պետք է հավետ թաղեր երկու աշխարհների միջև նետված այդ հրաժեշտը, որի մասին չգիտե ողջ արարչությունը, նման այն ճչին, որ ճանապարհորդն է արձակում անապատում, երբ նրա վրա հանկարծակի նետվում է առյուծը:

— Եվ եթե ձեզ դեմառդեմ կանգնեցնեին այս հյուրասրահում գտնվող մարդկանցից մեկի հետ և ձեզ ասեին. «Ահա մարդասպանը», մի՞թե դա մի ուրիշ ողբերգություն չէր լինի,— ասացի ես, ընդհատելով նրան:— Ապա դուք ի՞նչ կանեիք:

Պարոն Հերմանը գնաց վերցնելու իր գլխարկը և դուրս եկավ:

— Դուք վարվում եք պատանու պես և չափազանց թեթևամտորեն,— ասաց ինձ հարևանուհիս:— Նայեցեք Տայֆերին, ա՛յ, թիկնաթոռի վրա նստած, այնտեղ, բուխարու մոտ, օրիորդ Ֆաննին նրան մատուցում է մի բաժակ սուրճ: Նա ժպտում է: Մարդասպանը, որին այս արկածախնդրության պատմությունը տակնուվրա պիտի աներ, մի՞թե կարող էր այդպիսի հանդարտություն ցույց տալ: Մի՞թե նա իսկ և իսկ նահապետական տեսք չունի:

— Այո՛, բայց փորձեցեք նրան հարցնել, թե նա Գերմանիայում չի՞ եղել,— բացականչեցի ես:

— Ինչո՞ւ չէ:

Եվ այն համարձակությամբ, որը հազվադեպ չէ կանանց մոտ, երբ մի որևէ բան դուր է գալիս նրանց կամ թե հետաքրքրասիրությունը գրավում է նրանց միտքը, հարևանուհիս առաջացավ դեպի մատակարարը.

— Դուք եղե՞լ եք Գերմանիայում,— հարցրեց նրան: Տայֆերը քիչ էր մնում ձեռքից բաց թողներ բաժակը:

— Ե՞ս, տիկին, ո՛չ, երբեք չեմ եղել:

— Այդ ի՞նչ ես ասում, Տայֆեր,— առարկեց բանկիրը, ընդհատելով նրան,— դու մատակարարման բաժնում չէի՞ր Վագրամի արշավանքի ժամանակ:

— Ա՜հ, այո,— պատասխանեց պարոն Տայֆերը,— մի անգամ ես եղել եմ այնտեղ:

— Դուք սխալվում եք, նա մի բարի մարդ է,— ասաց հարևանուհիս, վերադառնալով ինձ մոտ:

— Դե լա՛վ,— բացականչեցի ես,— երեկոն չվերջացած, ես մարդասպանին դուրս կքշեմ այն տիղմից, որտեղ նա թաքնվում է:

Ամեն օր մեր աչքի առաջ կատարվում է ինչ-որ հոգեկան երևույթ՝ ապշեցուցիչ խորությամբ, սակայն այնքան պարզ, որ չի նկատվում: Եթե մի հյուրասրահում երկու մարդ իրար հանդիպեն, որոնցից մեկն իրավունք ունենա արհամարհելու կամ ատելու մյուսին, ծանոթ լինելով ինտիմ ու ծածուկ մի եղելության, որով մյուսը արատավորված է, կամ թե թափանցում է նրա բնության էության մեջ և նույնիսկ վրիժառության է պատրաստվում, այդ երկու մարդիկ իրար գուշակում են և կանխազգում այն անդունդը, որը նրանց միմյանցից բաժանում է կամ պետք է բաժանի: Նրանք իրար դիտում են, իրար ուսումնասիրում ակամայից, անհանգստանում: Նրանց հայացքներից, շարժումներից արտածորում է ինչ-որ անբացատրելի հոսանուտ, որով հայտնվում է նրանց մտքերը: Նրանց միջև մագնիս կա: Ես չգիտեմ ո՞րն է առավել ձգողականը, վրե՞ժը, թե ոճիրը, ատելությո՞ւնը, թե նախատինքը: Նման այն քահանայի, որը չէր կարող օրհնել նշխարը չար ոգու ներկայությամբ, նրանք երկուսով նեղված են, միմյանց նկատմամբ կասկածոտ, մեկը քաղաքավարի է, մյուսը՝ մռայլ, չգիտեմ երկուսից ո՛ր մեկը շառագունում է կամ գունատվում, մյուսը՝ դողում: Հաճախ վրիժառուն նույնքան վախկոտ է, որքան զոհը: Քչերն ունեն չարիք հանդես բերելու քաջություն, եթե նույնիսկ այդ անհրաժեշտ է, և շատ ու շատ են նրանք, ովքեր լռում են կամ ներում, ատելով աղմուկը կամ վախենալով մի ողբերգական ելքից: Մեր հոգիների և զգացմունքների այս փոխադարձ ներթափանցումը մի տեսակ խորհրդավոր պայքար էր առաջացնում իմ և մատակարարի միջև: Այդ առաջին հարցապնդումից հետո, որ ես արել էի պարոն Հերմանի պատմության ընթացքում, նա խուսափում էր իմ հայացքներից: Գուցե և խուսափում էր բոլոր հյուրերի հայացքներից. նա խոսում էր անփորձ Ֆաննիի, բանկիրի աղջկա հետ, զգալով, անտարակույս, ինչպես բոլոր ոճրագործները, անմեղությանը մոտենալու կարիքը, այն հույսով, թե ինքը նրա մոտ կարող էր հանգստություն գտնել իր համար: Բայց, թեև կանգնած նրանից հեռու՝ ես լսում էի նրան, և իմ թափանցուն նայվածքը ասես ակնահարում էր նրա հայացքը: Երբ նրան թվում էր, թե կարող է գաղտագողի և անպատիժ դիտել ինձ, ապա մեր հայացքներն իրար էին հանդիպում, և նա անմիջապես խոնարհում էր իր աչքերը: Այս չարչարանքից հոգնած և վերջ տալու համար դրան, Տայֆերն շտապեց թղթախաղի նստել: Ես դարձա նրա հակառակորդի բաժնեդիրը, սակայն, փափագելով տանուլ տալ: Ցանկությունս կատարվեց. փոխարինեցի դուրս եկող խաղացողին և ինձ գտա դեմ առ դեմ մարդասպանի հետ...

— Պարո՛ն,— ասացի,— երբ նա ինձ խաղաքարտ էր տալիս,— բարի եղեք հաշիվը ջնջել:

Նա բավականին շտապողականությամբ իր ժետոններն անցկացրեց ձախից դեպի աջ: Հարևանուհիս մոտեցավ ինձ, ես նրան նշանակալից մի հայացք գցեցի:

— Դուք արդյո՞ք,— ասացի, դիմելով մատակարարին,— Ֆրեդերիկ Տայֆերը չե՞ք, որի ազգականներին ես մոտիկից ճանաչել եմ Բովեում:

— Այո՛, պարոն,— պատասխանեց նա: Նա ձեռքից բաց թողեց թղթերը, գունատվեց, գլուխն առավ իր ափերի մեջ, խնդրեց իր բաժնեդիրներից մեկին փոխարինել իրեն, և վեր կացավ:

— Չափից դուրս տոթ է այստեղ,— բացականչեց նա:— Ես վախենում եմ...

Չավարտեց: Նրա դեմքը հանկարծակիորեն արտահայտեց մի ահռելի տառապանք, և նա ընդոստ դուրս եկավ: Տանուտերը ուղեկցեց Տայֆերին, սաստիկ մտահոգված լինելով նրա վիճակով: Ես և հարևանուհիս իրար նայեցինք, բայց ես նկատեցի, որ դառն տխրության մի ստվեր մռայլեց նրա դեմքը:

— Մի՞թե ձեր վերաբերմունքը բարեգութ է,— ասաց նա, տանելով ինձ դեպի մի պատուհանի խորշն այն րոպեին, երբ տանուլ տալուց հետո ես խաղից դուրս եկա:— Մի՞թե դուք ընդունում եք, որ

հնարավոր է բոլոր սրտերում կարդալ: Ինչո՞ւ չթողնել, որպեսզի գործի մարդկային կամ աստվածային արդարությունը: Եթե մենք փախչենք մեկից, մյուսից խուսափել չենք կարող: Քրեական ատյանի նախագահի առանձնաշնորհումները մի՞թե այդպես նախանձելի են: Դուք համարյա թե դահիճի պաշտոն կատարեցիք:

— Իմ հետաքրքրասիրությունը բաժանելուց, խթանելուց հետո դուք ինձ բարոյախոսություն եք կարդում:

— Դուք հարկադրեցիք ինձ խորհրդածել,— պատասխանեց նա:

— Ուրեմն, խաղաղություն չարագործներին ու պատերազմ՝ դժբախտներին ու փառաբանենք ոսկին, բայց, թողնենք այդ,— ավելացրի ես, ծիծաղելով,— նայեցեք այդ մանկամարդ օրիորդին, որն այս րոպեիս մտնում է հյուրասրահ:

— Հետո ի՞նչ:

— Երեք օր առաջ ես նրան տեսա Նեապոլի դեսպանի պարահանդեսում, ես սաստիկ սիրահարվել եմ նրան: Խնդրում եմ ասեք նրա անունը: Ոչ ոք չկարողացավ…

— Նա օրիորդ Վիկտորին Տայֆերն է:

Գլուխս շշմեց:

— Նրա խորթ մայրը,— ասում էր ինձ հարևանուհիս, որի ձայնը հազիվ էի լսում,— վերջերս վանական պանսիոնից հանեց նրան, ուր ավարտվում էր նրա ուշացած դաստիարակությունը: Հայրը երկար ժամանակ չէր ուզում նրան ճանաչել: Առաջին անգամն է, որ նա գալիս է այստեղ: Նա շատ գեղեցիկ է և հարուստ:

Ինչ-որ դիվային մի ժպիտ էր ուղեկցում այս խոսքերին: Այդ րոպեին մենք լսեցինք սաստիկ, բայց խլացած աղաղակներ: Կարծես դրանք գալիս էին հարևան սենյակից և թույլ թնդում էին այգիներում:

— Սա մի՞թե պարոն Տայֆերի ձայնը չէ,— բացականչեցի ես:

Մենք լարված լսում էինք աղմուկը. զարհուրելի թառանչանքներ հասան մեր ականջին: Բանկիրի կինը շտապ վազեց դեպի մեզ և փակեց պատուհանը:

— Խուսափենք հուզումնալի տեսարաններից,— ասաց նա:— Եթե օրիորդ Տայֆերը լսի իր հոր ձայնը, նա կարող է ջղային նոպա ունենալ:

Բանկիրը վերադարձավ հյուրասրահը, փնտրեց Վիկտորինին և ցածրաձայն ինչ-որ բան ասաց նրան: Մանկամարդ աղջիկը ճիչ արձակեց, խոյացավ դեպի դուռը և անհայտացավ: Այդ իրադարձությունն զգայացունց տպավորություն գործեց: Խաղը դադարեց: Յուրաքանչյուրը հարձուփորձեց իր հարևանին: Ձայների մրմունջը մեծացավ, և խմբեր կազմվեցին:

— Չլինի՞ պարոն Տայֆերն իրեն…— հարցրեցի ես:

— Սպանել է,— վրա տվեց իմ ծաղրածու հարևանուհին:— Ես կարծում եմ, դուք ուրախությամբ պիտի տանեիք նրա սուգը:

— Բայց ի՞նչ է պատահել նրա հետ:

— Խե՜ղճ մարդը,— պատասխանեց տանտիրուհին,— մի տեսակ հիվանդություն ունի, որի անունը չեմ կարողանում միտս պահել: Չնայած պարոն Բրուսոնը հաճախ այդ ասել է ինձ, և նա այդ հիվանդության նոպայով է բռնվել:

— Դա ի՞նչ տեսակի հիվանդություն է,— հանկարծակի հարցրեց մի դատական քննիչ:

— Օ՜, դա մի սարսափելի հիվանդություն է, պարոն,— պատասխանեց նա:— Բժիշկները ոչ մի դեղ չգիտեն դրա համար: Երևի դա անտանելի ցավեր է պատճառում: Մի օր, երբ այս դժբախտ Տայֆերը, որ հյուր էր եկել իմ կալվածքը, բռնվեց իր հիվանդության նոպայով, ես չկարողացա լսել դժբախտի աղեկտուր ճիչերը և ստիպվեցի գնալ իմ հարևանուհիներից մեկի մոտ. նա սարսափելի աղաղակներ էր բարձրացնում, ուզում էր իրեն սպանել: Այն ժամանակ, նրա աղջիկն ստիպվեց նրան կապել մահճակալին և զսպաշապիկ հագցնել: Այդ խեղճ մարդը պնդում էր, որ գլխում ինչ-որ կենդանիներ կրծում են իր ուղեղը. ծակոցներ են, սողոցի հարվածներ, ահռելի ջղաձգություններ ողջ մարմնում: Նա այնպիսի գլխացավեր է ունենում, որ չի զգում մարմնում խարաններ բացելու համար իրեն կպցրած կիզողականները, որպեսզի փորձեն գլխացավը մոռացնել տալ: Բայց պարոն Բրուսոնը, որը բուժում է նրան, արգելել է դրանք, պնդելով, որ դա ներվային հիվանդություն է, **ջղերի բորբոքում,** որի համար հարկավոր է տզրուկներ կպցնել վզին և օպիում դնել գլխին. և արդարև, նոպաները դարձան ավելի հազվադեպ, տարին միայն մեկ անգամ՝ աշնան վերջերին: Երբ առողջանում է, Տայֆերն անընդհատ կրկնում է, որ ինքը կգերադասեր իրեն անվահարեն, քան թե զգար այդօրինակ ցավեր:

— Երևի այն ժամանակ շատ է տառապում,— ասաց բորսային մի միջնորդ — սալոնային սրամիտը:

— Օ՜,— շարունակեց տանտիրուհին,— անցյալ տարի քիչ էր մնում մահանար: Նա ինչ-որ շտապ գործով մենակ գնացել էր իր կալվածքը, թերևս օգնություն չլինելու պատճառով, նա այնտեղ քսաներկու ժամ մնացել է փռված, քարացած վիճակում, կարծես, մեռած լիներ: Նա փրկվել էր տաք մի լոգանքով:

— Ուրեմն դա մի տեսակ պրկախտ է,— ասաց բորսային միջնորդը:

— Չգիտեմ,— պատասխանեց տանտիրուհին:— Ահա երեսուն տարի է մոտավորապես, ինչ նա տառապում է բանակում ստացած այդ հիվանդությամբ: Ասում է, թե փայտի սուր բեկոր է խրվել գլխին, երբ նավի մեջ գտնվելիս՝ ընկել է: Բայց, Բրուսոնը հուսով է, որ նրան կառողջացնի: Պնդում են, թե անգլիացիները գտել են այդ հիվանդությունը կապտաթթվով անվտանգ բուժելու միջոցը:

Այդ րոպեին, մի ճիչ, ավելի սուր, քան մյուսները, արձագանքեց տնով մեկ՝ ահ ու սարսափի մատնելով բոլորիս:

— Լսո՞ւմ եք: Այդպես էր նա բղավում այն ժամանակ,— շարունակեց բանկիրի կինը:— Հենց որ լսում էի, վեր էի թռչում աթոռիցս՝ ներվերս թունդ ելած: Բայց, տարօրինա՜կ բան, այս խեղճ Տայֆերը, տառապելով հանդերձ այդ անլուր ցավերով, կենդանի է մնում. այդ սոսկալի տանջանքների դադարների ընթացքում նա ուտում է ու խմում սովորականի պես, (բնությունն իրոք որ արտառոց է): Մի գերմանացի բժիշկ նրան ասել է, որ դա գլխում մի տեսակ հոդակաթված է, ինչ որ բավականին համընկնում է Բրուսոնի կարծիքի հետ:

Ես թողեցի տանտիրուհու շուրջը կազմված խումբը և հետևեցի օրիորդ Տայֆերին, որին մի սպասավոր եկել էր տանելու…

— Օ՜, աստվա՛ծ իմ, աստվա՛ծ, բացականչեց նա, լաց լինելով,— ինչ մեղքով է հայրս բարկացրել երկնքին, որ արժանացել է այդ տառապանքներին... Նա այնպես բարի՜ է:

Ես սանդուղքներով ցած իջա նրա հետ, և կառք բարձրանալու համար նրան օգնելիս՝ այնտեղ տեսա հորը, ցավից կուչ եկած: Օրիորդ Տայֆերն աշխատում էր խլացնել հոր հեծեծանքները՝ թաշկինակով ծածկելով նրա բերանը, չար բախտից նա ինձ նկատեց, նրա դեմքը կարծես ավելի կծկվեց. աղեգալար մի աղաղակ պատառոտեց օդը, նա ինձ մի սարսափելի հայացք գցեց, և կառքը շարժեց:

Այդ ճաշկերույթը, այդ երեկոն մի տաժանելի ազդեցություն գործեցին իմ կյանքի, իմ զգացմունքների վրա: Ես սիրեցի օրիորդ Տայֆերին հենց այն պատճառով, գուցե, որովհետև պատիվն ու փափկանկատությունն ինձ արգելում էին խնամիություն հաստատել մի մարդասպանի հետ, որքան էլ նա բարի հայր և լավ ամուսին եղած լիներ: Մի անհավատալի ճակատագրականություն քաշում էր ինձ և ինձ ստիպում, որ ներկայանամ այն տներում, որտեղ գիտեի, թե կարող եմ հանդիպել Վիկտորինին: Հաճախ, պատվո խոսք էի տալիս, որ կհրաժարվեմ նրան հանդիպելուց, բայց նույն երեկո ինձ գտնում էի նրա մոտ: Իմ վայելքներն անսահման էին: Օրինավոր սերս, մտացածին խղճի խայթով լի՝ ոճրային ու արգելված սիրո գունավորում ուներ: Ես ինձ արհամարհում էի Տայֆերին բարևելիս, երբ նա պատահմամբ իր դստեր հետ էր լինում, և սակայն ես նրան բարևո՜ւմ էի: Վերջապես, չար բախտից Վիկտորինը ոչ միայն մի սիրուն անձնավորություն է, այլև նա զարգացած է, վերին աստիճանի օժտված, շնորհալի, զերծ ամեն տեսակի իմաստակությունից, նա չունի և հավակնոտության ամենաթեթև նշույլն անգամ: Խոսելիս՝ նա զուսպ է, և նրա բնավորությունն ունի ինչ-որ շնորհալի մելամաղձոտություն, որին ոչ ոք չի կարող դիմադրել: Նա ինձ սիրում է, կամ գեթ նա ինձ հավատացնում է: Նա ունի մի ժպիտ, որ վերապահում է միմիայն ինձ համար, և նրա ձայնն ինձ համար առավել ևս է քաղցրանում: Օ՜, նա ինձ սիրում է, բայց նա պաշտում է հորը, նա գովաբանում է նրա բարությունը, հեզությունը, հիանալի բարեմասնությունները: Այդ գովասանքներից յուրաքանչյուրը նրա կողմից իմ սրտին խրված դաշույնի մի հարված է: Մի օր ես քիչ էր մնում մեղսակից լինեի այն ոճրին, որի վրա խարսխված է Տայֆեր ընտանիքի հարստությունը. քիչ էր մնում Վիկտորինի ձեռքը խնդրեի: Ուստի, ես փախա, ճանապարհորդեցի, գնացի Գերմանիա, Անդերնախ: Սակայն վերադարձա: Վիկտորինին ես գտա գունաթափված, նա նիհարել էր: Եթե նրան գտնեի առողջ, զվարթ, ես փրկված էի: Իմ սերը կրկին անգամ բոցավառվեց անօրինակ ուժգնությամբ: Վախենալով, որ իմ խղճամտությունը, ի վերջո, այլասերվելով, դառնա մենամոլություն, ես որոշեցի մաքուր խղճի տեր մարդկանցից ժողով գումարել, որպեսզի որոշ լույս սփռվի այս բարձր բարոյականության ու փիլիսոփայության խնդրի վրա: Իմ վերադարձից հետո հարցը առավել ևս էր խճճվել: Երեկ չէ մյուս օրը, ուրեմն, ես հավաքեցի իմ բարեկամներից նրանց, ովքեր իմ կարծիքով ամենից ավելի ուղղամիտ էին, նրբազգաց ու պատվախնդիր: Ես հրավիրեցի երկու անգլիացիների՝ մեկը դեսպանության քարտուղար, մյուսը՝ մաքրակրոն, մի նախկին մինիստրի, օժտված քաղաքական գործիչի հասուն խելքով, երիտասարդների, որոնք դեռևս գտնվում էին անմեղության հմայքի ազդեցության ներքո, մի ծերունի քահանայի, ապա, իմ նախկին խնամակալին, մի պարզասիրտ մարդ, որն ինձ ներկայացրել էր խնամակալական ամենագեղեցիկ հաշվետվությունը, որի հիշատակը դեռևս թարմ է Արդարադատության պալատում, մի փաստաբանի, մի նոտարի, մի դատավորի, վերջապես, այնպիսի մարդկանց, որոնք ներկայացնում են հասարակական բոլոր տեսակի կարծիքները և կենսական բոլոր առաքինությունները: Մենք նախ և առաջ մի լավ ճաշեցինք, խոսեցինք, բղավեցինք, ապա, աղանդերին, ես պարզամտությամբ նրանց պատմեցի իմ պատմությունը և խնդրեցի ինձ տալ մի որևէ լավ խորհուրդ, թաքցնելով իմ հարսնացուի անունը:

— Հայտնեցեք ինձ ձեր կարծիքը, բարեկամնե՛րս,— ասացի ես վերջացնելով:— Երկարորեն քննեցեք հարցն այնպես, ինչպես, եթե դա լիներ ինչ-որ օրենքի նախագիծ: Ձեզ կբերվի բիլիարդի գնդիկները

և սափոր ու դուք կքվեարկեք իմ ամուսնության թեր կամ դեմ՝ գաղտնի քվեարկության պահանջած բոլոր կանոններով:

Իսկույն տիրեց խոր լռություն: Նոտարը հրաժարվեց.

— Բայց այստեղ ամուսնական պայմանագրի հարց կա,— ասաց նա:

Գինին լռության էր դատապարտել իմ նախկին խնամակալին. հարկավոր էր նրան դնել խնամակալության տակ, որպեսզի տուն վերադառնալիս՝ ոչ մի դժբախտություն չպատահեր նրա հետ:

— Հասկանում եմ,— բացականչեցի ես,— կարծիք չտալ, դա նշանակում է հաստատորեն ասել ինձ, թե ես ինչպես պետք է վարվեմ:

Ինչ-որ շարժում տեղի ունեցավ հավաքվածների մեջ:

Մի կալվածատեր, որը մասնակցել է ի նպաստ գեներալ Ֆուայի[3] երեխաների ու նրա դամբարանի համար տեղի ունեցած հանգանակությանը, բացականչեց.

Ինչպես առաքինությունը,

Ոճիրն էլ ունի իր աստիճանը:

— Շատախոս,— ասաց նախկին մինիստրը ցածրաձայն, մշտելով ինձ արմունկով:

— Բայց, ինչո՞ւմն է դժվարությունը,— հարցրեց մի դուքս, որի հարստությունը կազմված էր Նանտի հրովարտակը չեղյալ հայտարարելուց հետո բողոքականների բռնագրավված հողերից:

Վեր կացավ փաստաբանը:

— Քննարկվող հարցն իրավականորեն ոչ մի դժվարություն չէր ներկայացնի: Պարոն դուքսը միանգամայն իրավացի է,— բացականչեց օրենքի այդ մունետիկը:— Չէ՞ որ գոյություն ունի վաղեմություն: Ո՞ւր կհասներ մեր բոլորի վիճակը, եթե մենք ստիպված լինեինք ստուգելու, թե ի՞նչն է կազմել յուրաքանչյուրի հարստության հիմքը: Եթե դուք ցանկանում եք գործն անպայման դատարան տանել, ապա գնացեք ապաշխարության ատյանը:

Մարմնավորված օրենսգիրքը լռեց, նստեց և խմեց մի բաժակ Շամպայնի գինի: Վեր կացավ ավետարանը մեկնաբանելու կոչված մարդը, բարի քահանան:

— Աստված մեզ դյուրաբեկ է ստեղծել,— ասաց նա համոզվածությամբ:— Եթե դուք սիրում եք ձեր ժառանգորդուհուն, ամուսնացե՛ք նրա հետ, բայց բավարարվեցեք մայրական գծով հասնող օժիտով, իսկ հոր բաժինը տվեք աղքատներին:

— Բայց,— բացականչեց մեկը այն անհաշտ վիճողներից, որոնց մենք հաճախ հանդիպում ենք աշխարհիկ հասարակության մեջ,— նրա հայրը, գուցե այդ շահավետ ամուսնությունը կարողացել է կնքել միմիայն այն բանի շնորհիվ, որ հարստացել էր: Նրա ամենաչնչին հաջողությունները մի՞թե ոճրի արգասիքը չեն եղել:

— Հենց այս վիճաբանությունը ինքնին դատավճիռ է: Կան բաներ, որոնց մասին մարդը չի վիճում,— բացականչեց իմ նախկին խնամակալը, կարծելով, որ լուսավորում է հավաքվածներին գինովի իր իմաստությամբ:

— Այո՛,— ասաց դեսպանության քարտուղարը:

— Այո՛,— բացականչեց քահանան:

Այս երկու մարդիկ իրար չէին հասկանում:

Վեր կացավ մի դոկտրինյոր, որին ընտրվելու համար պակասել էր միմիայն հարյուր հիսուն քվե, հարյուր հիսունհինգ քվեարկողների դիմաց:

— Պարոններ, այս ֆենոմենալ դեպքը պատկանում է ինտեկտուալ ոլորտին և դուրս է գալիս այն երևույթների շրջանակից, որոնք բնորոշ են մեր հասարակության նորմալ կացության համար: Հետևաբար, այն որոշումը, որ մենք պիտի ընդունենք, պետք է բոլորի կողմից արտահայտվի՝ համաձայն խղճի թելադրության, հանկարծական դատողության ճանապարհով, և խրատական արտացոլում հանդիսանա հոգեկան վերապրումների, որոնք բավականին բարդ են այն ճաճանչումներով, որոնց մեջ արտահայտվում են զգացումներն ու հակումները: Քվեարկե՛նք:

— Քվեարկե՛նք,— բացականչեցին իմ հյուրերը:

Ես կարգադրեցի յուրաքանչյուրին տալ երկու գնդակ. մեկը՝ սպիտակ, մյուսը՝ կարմիր: Սպիտակը՝ կուսության սիմվոլը, պետք է դատապարտեր ամուսնությունը, իսկ կարմիր գնդիկը պետք է այն հաստատեր, ինքս փափկանկատությամբ ձեռնպահ մնացի: Բարեկամներս տասնյոթն էին. ինը քվե բացարձակ մեծամասնություն էր կազմում: Նրանցից յուրաքանչյուրը գնաց իր գունդը գցելու նեղ բերանով, հյուսված զամբյուղի մեջ, ուր համարակալված գնդակներ են դնում բիլիարդ խաղալիս, և մենք տարված էինք սաստիկ հետաքրքրությամբ, որովհետև հանուն անարատ բարոյականության կատարված այս քվեարկությունն իր մեջ բովանդակում էր ինչ-որ յուրօրինակ բան: Քվեները հաշվելիս ես գտա ինը սպիտակ գունդ: Այս արդյունքն ինձ չզարմացրեց, բայց ես միտք հղացա հաշվել, թե իմ ընտրած դատավորների մեջ ինձ հասակակից քանի՛ երիտասարդներ կային: Այդ կազուիստների թիվը ինն էր. նրանք բոլորն էլ միևնույն միտքն էին ունեցել

«Օ՜, օ՜հ,— մտածեցի ես,— այստեղ գաղտնի միաձայնություն կա ի նպաստ ամուսնության և միաձայնություն՝ այդ ամուսնությունն ինձ արգելելու համար... ինչպե՞ս դուրս գալ այդ շփոթ դրությունից:

— Որտե՞ղ է ապրում ձեր անները,— թեթևամտությամբ հարց տվեց կոլեջի իմ ընկերներից մեկը, որը մյուսներից ավելի անկեղծ էր:

— Աներն այլևս գոյություն չունի,— բացականչեցի ես:— — Մի ժամանակ իմ խիղճն այնքան բարձր էր խոսում, որ ձեր վճիռն ավելորդ կլիներ: Եվ եթե այսօր նրա ձայնը թուլացել է, ահա իմ վեհերոտության շարժառիթը: Երկու ամիս է, ինչ ես ստացել եմ այս մոլորեցուցիչ նամակը: Ես նրանց ցույց տվեցի հետևյալ հրավիրատոմսը, որ դուրս քաշեցի իմ թղթապանակից:

«Խնդրվում է Ձեզ ներկա լինել հուղարկավորության պատարագին, ինչպես նաև թաղմանը պարոն Ժան-Ֆրեդերիկ Տայֆերի, Տայֆեր և Ընկերություն ֆիրմայի գլխավորի, սենդեղենի և մսի նախկին մատակարար, իր կենդանությանը Պատվո Լեգեոնի և Ոսկե Խթանի ասպետ, Փարիզի ազգային գվարդիայի երկրորդ լեգեոնի գրենադիրական վաշտի կապիտան, վախճանված մայիսի մեկին իր ապարանքում, Ժուբեր փողոց, հոգեհանգիստը կկատարվի... և այլն:

.... կողմից... և այլն»:

— Այժմ ի՞նչ անել,— շարունակեցի ես,— ես հարցը ձեր առաջ դնում եմ լայնորեն: Որ Հացելդամա[4] գոյություն ունի օրիորդ Տայֆերի կալվածքներում, դա ստույգ է. նրա հոր ժառանգությունը մի ընդարձակ Հացելդամա է: Ես այդ գիտեմ, սակայն, Պրոսպեր Մանյանը ժառանգ չի թողել, և ինձ անկարելի եղավ գտնել Անդերնախում սպանված գնդասեղի ֆաբրիկանտի ընտանիքին: Ո՞ւմ վերադարձնել հարստությունը: Եվ պե՞տք է ամբողջ հարստությունը վերադարձնել: Մի՞թե ես իրավունք ունեմ հայտնելու անակնկալորեն իմացածս գաղտնիքը, ինչ-որ մի կտրված գլուխ ավելացնել մի անմեղ աղջկա օժիտին, հասնել այն բանի, որ նա վատ երազներ տեսնի, նրա գեղեցիկ պատրանքը խորտակվի, նրա հորը կրկին անգամ սպանել, նրան ասելով. «Ձեր բոլոր ոսկիներն արյունոտ են»: Ես մի ծեր եկեղեցականից վերցրի «Խղճի հարցերի բացատրական բառարանը» և այնտեղ ոչ մի լուծում չգտա իմ տարակուսանքներին: Ինչ-որ բարեպաշտական հիմնարկությո՞ւն հաստատել Պրոսպեր Մանյանի, Վալենֆերի, Տայֆերի հոգու համար, բայց մենք գտնվում ենք տասնիններորդ դարում: Անկելանո՞ց կառուցել կամ առաքինության մի մրցանա՞կ հիմնել. առաքինության մրցանակը կտրվի խաբեբաներին: Ինչ վերաբերում է մեր անկելանոցներից շատ-շատերին, ինձ թվում է, թե դրանք այսօր դարձել են ախտամոլության ապաստարաններ: Բացի դրանից, այդ ներդրումները, որոնք առավել կամ նվազ չափով շոյում են սնափառությունը, արդյոք կհատուցե՞ն այդ ոճիրը, իսկ ես մի՞թե պարտավոր եմ այդ հատուցումներն անել: Եվ հետո, ես սիրում եմ, սիրում եմ ամբողջ սրտով: Եթե ես առանց պատճառի առաջարկեմ մի աղջկա, որը սովոր է ճոխության, պերճանքի, գեղարվեստական վայելքներով լի կյանքի, մի այնպիսի աղջկա, որը Իտալական թատրոնում սիրում է հեղկորեն ունկնդրել Ռոսսինիի երաժշտությունը, եթե ուրեմն ես նրան առաջարկեմ զրկվել մեկ միլիոն հինգ հարյուր հազար ֆրանկից, ի նպաստ տխմար ծերունիների կամ ինչ-որ մտացածին քոսոտների, նա ինձնից շուռ կտա իր երեսը՝ ծիծաղելով կամ նրա մտերիմ բարեկամուհին ինձ կդնի խեղկատակի տեղ: Եթե, սիրո հոգեզմայլության մի պահին, ես նրան գովաբանեմ համեստ կյանքի հմայքը և իմ փոքրիկ տնակը՝ Լուառի ափին, եթե, հանուն մեր սիրո, ես նրանից պահանջեմ իր փարիզյան կյանքի զոհաբերությունը, դա նախ և առաջ կլինի բարեմտորեն արված ստախոսություն: Հետո, գուցե այդպիսով ես կկատարեմ մի տխրալի փորձ և կկորցնեմ այդ աղջկա սիրտը, որը սիրահար է պարահանդեսի, խենթի պես սիրում է զարդարանքները և առայժմ նաև ինձ: Նրան ինձնից կխլի շքված-զարդարված, բարակիկ մի սպա, որը կունենա ոլորուն բեղեր, գիտե դաշնամուր նվագել հյուրասրահում, գովաբանել լորդ Բայրոնին և հիանալի ձիավարել: Ի՞նչ անել, պարոնա՛յք, խնդրում եմ, մի խորհուրդ տվեք ինձ… Պարկեշտ մարդը, Ջեննի Դինսի[5] հոր բավականին նման այդ մի տեսակ մաքրակրոնը, որի մասին ես ձեզ հիշատակեցի և որը մինչ այդ ոչ մի բառ չէր արտասանել, թոթվեց ուսերը և ինձ ասաց.

— Անմի՛տ: Ի՞նչ կարիք կար հարցնելու, թե նա արդյոք Բովե՞ քաղաքից էր:

ԿԱՐՄԻՐ ՊԱՆԴՈԿ

Առաջին անգամ այս պատմվածքը տպվել է 1831 թվականին, «Ռևյու դը Փարի» ժուռնալի օգոստոսյան համարներում: 1846 թվականին հեղինակն այն մտցրեց «Մարդկային կատակերգության» XV հատորում («Փիլիսոփայական էտյուդներ», հատոր 2-րդ):

«Կարմիր պանդոկ» պատմվածքում ցույց է տրված մարդասպան-բանկիր Տայֆերի կարիերայի սկիզբը: Տայֆերը հանդես է գալիս «Շագրենի կաշի» և «Հայր Գորիո» վեպերում:

Բանկիր Տայֆերի կերպարը համանման է «Մարդկային կատակերգության» մյուս հերոսներին, որոնք հարստության գագաթին են հասնում կեղտոտ մեքենայություններով և ուղղակի հանցագործություններով:

[1] **Կարեմ** — Բալզակի ժամանակ խոհարարապետ:

[2] **Բրիյա–Սավերենը** — «Ճաշակի բնախոսությունը» գրքի հեղինակը:

[3] **Ֆուշե** (1775—1825) — նապոլեոնական գեներալ, Ռեստավրացիայի ժամանակ պառլամենտի դեպուտատ լիբերալ պարտիայի կողմից:

[4] **Հացելդամա** — «Արյան լիճ». այդպես էր անվանվում այն դաշտը, որը, ըստ աստվածաշնչային ավանդության, Հուդան գնեց Հիսուս Քրիստոսին մատնելու համար ստացած երեսուն արծաթով:

[5] **Ջեննի Դինս** — Վալտեր Սկոտի «Էդինբուրգյան բանտ» վեպի հերոսուհին: